№ 97 ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 11

1907

ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 11 № 97

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՕՊԵԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1907** ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և փողեր ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ուրբաթ, մայիսի 11-ին
Թիֆլիսի ժողովարանի ամառային շէնքում

ՅՕԳՈՒՏ
ՀԱՒԼԱԲԱՐԻ ՇԱՄՔՈՌԵՑԻՈՑ ՏԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

կը կայանայ

ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ

կը լինեն

խճճախաղ, մանկական խաղեր, удочка, օդակների խաղ, իշու վրա զբօսանք, աւտոմատ—հաւ, ձիարշաւ, կոնֆետաի խմբովին երգեցողութիւն, եւրոպական և ասիական երաժշտութիւն:

Հանրամատչելի բուֆէտ

ՊԱՐԵՐ

Վերջումը օդապարիկ

Մուտքը մեծերի համար 20 կ.
» երեխաների » 10 կ.

Զբօսանքի սկիզբն է ցերեկվայ ժամը 4-ին

(չ. ու.) 2—2

300,000

150,000-ՈՎ

Բացատրութիւնը մայիսի 13-ին

առ. (հ. ու. շ.) 2—3

Շաբաթ, մայիսի 12-ին

Թիֆլիսի ժողովարանի այգում

ՅՕԳՈՒՏ
Աշխատանքի տան Հայուհեաց „Մեղու“ Ընկերութեան

ԿԸ ԿԱՅԱՆԱՅ

ՄԱՅԻՍԵԱՆ ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ

ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

ԾՐԱԳԻՐ

Երկու երաժշտական խումբ (եւրոպական և ասիական): Մանկական երգեցիկ խումբ 10 տարեկան խմբապետի ղեկավարութեամբ

Օդապարիկ (ժամը 6-ին): Մանկական խաղեր (ժամը 4-ից): Երեխաների հանդիսաւոր ընթացք դրօշակներով: Մի հեքեաթ 5 կենդանի պատկերներով: Բերուսներ մրցանակներով (ժամացոյց և այլն): Տիկնիկ, օղակների խաղ, վիճակախաղ, կարթ, Սանխօ-Պանչօ, նոր խաղ «Տիւանիկէ» (մեծերի համար), petits chevaux, լօտօ (ցերեկվայ ժամը 12-ից), կոնֆէտի, ծաղիկներ, բուֆէտ:

Մուտքը մեծերից 25 կ., երեխաներից 15 կ.:

(առ.) 2—3

25% զուտ արդիւնքից յատկացվում է յօգուտ հայ սովեալների

Կիրակի, մայիսի 13-ին

Թիֆլիսի ժողովարանի այգում

Յօգուտ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան

կը կայանայ

ՄԱՅԻՍԵԱՆ ԶԲՕՍԱՆՔ

ՀԱՄԵՐԳ «Արևելեան Երաժշտական Ընկերութեան»

Գ. Քեչեճեանի ղեկավարութեամբ, այգում, խխունջի մէջ: (Հայկական, վրացական և պարսկական եղանակներ):

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

կը կատարէ երգեցիկ խումբը պ. Մանուկեանի ղեկավարութեամբ:
Վիճակախաղ, կարթ, բախտի տակառ, բլրակ (горка), petit chevaux, հանրամատչելի բուֆետ, երկու երաժշտական խումբ:
Մուտքը մեծերի համար 40 կոպ., երեխաների, աշակերտների (համազգեստով) և զինուորների համար 20 կոպէկ:

Համերգը կը սկսվի ժամը 7-ից

Համերգից յետոյ **ՊԱՐԵՐ**

Զբօսանքը կը սկսվի ժամը 4-ին և կը վերջանայ գիշ. ժամը 12-ին: Կօնտրմարկա չէ տրվում:

առ. (ու. շ. կ.) 1—3

Թիֆլիսի Մարիամեան-Յովնանեան դպրոցի

հոգաբարձութիւնը

հրաւիրում է առաջիկայ ուսումնական տարվայ համար տեսուչ տարեկան 2000 ռուբլի ռոճիկով և շաբաթական 6 դասով: Դասագինը՝ 50 ռուբլի: Ցանկացողները պէտք է դիմեն հոգաբարձութեանը մինչև մայիսի 25-ը, ուղարկելով նաև համառօտ curriculum vitae: Հասցէն՝ Тифлисъ Бебутовская ул., № 14, Анановское женское училище.

8, 11, 13, 16, 18, առ. 2—5

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը

Պատիւ ունի յայտնելու ընկերութեան մեծարգոյ անդամներին, որ կիրակի, մայիսի 13-ին, առաւօտեան ժամը 11-ին, քաղաքային տան դահլիճում նշանակված է երկրորդ անգամ տարեկան ընդհանուր ժողով:

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) 1906 Թ. հաշւետուութիւնը:
2) 1907 Թ. նախահաշիւները:
3) Վերաստուգող Յանձնաժողովի զեկուցումը:
4) Ընկերութեանը կտակած հանգուցեալ Յովհ. Ծուղաղեանի քարվանսարայի վերաշինութեան հարցը:
5) Վարչութեան 4 անդամների, 4 փոխանդամների և վերաստուգող յանձնաժողովների 3 անդամների ընտրութիւնը:
6) Որբանոց-դպրոցի հարցը:
7) Ընթացիկ հարցեր:

Այս ժողովը կը կայանայ քանի անդամ որ ներկայ լինի: (ա. օ.) 2—4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ դպրոցը. Հետևեցէք այս օրինակին. Վերջին տեղեկութիւններ. Պետական Դումայի շուրջը. Նամակ Պետերբուրգից. Ուշադրութեան պէտք է առնել նաև մեր աղէտեալներին. Վիբորգի կոչի առթիվ. Մամուլ. Դատաստանական դահլիճից, Պարլամենտական լուրեր. Միևնոյն փոսի մէջ. Ազգագրական Հանդէս. Անտեղի գժգոհութիւն. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Ուսուցիչներ:

ԴԱՐՁԵԱԼ ԴՊՐՈՑԸ

I

Որքան աշխատանք, որքան զոհեր հայ դպրոցի համար:

Եւ այդ դպրոցը չը կայ:

Համարեա թէ չը կայ:

Մեզ վերադարձրած են մեր դպրոցները: Մեզ իրաւունք է տրված բանալ դպրոցներ, որքան որ ցանկանանք, թէկուզ իւրաքանչիւր գիւղում. բայց իրապէս մենք շատ քիչ տեղերում բացինք դպրոցներ և եղածներն էլ պահում ենք շատ անմխիթարական վիճակի մէջ:

Իսկ տեսէք թէ ինչ շրջանում ենք մենք ապրում: Ամբողջ պետութիւնը ցանկանում է ընդարձակել կրթական գործը և եթէ հնարաւոր է մտցնել ընդհանուր պարտադիր կրթութեան օրէնք ժողովրդի համար ամենուրեք:

Արգելքի օրերում մենք գցուած էինք բոլոր մեղքը արտաքին հանգամանքների վրա: Այժմ պաշտօնական խոչընդոտները վերացել են և եթէ մենք դպրոցներ չենք բացում, դա արդիւնք է մեր հասարակական-կուլտուրական անկարութեան:

II

Եթէ դպրոցական գործը կաղէր միայն այն շրջանում, ուր տեղի ունեցան հայ-թուրքական ընդհարումներ, մենք հասկանալի կը համարէինք մի այդպիսի երևոյթ:

Բայց իրականութիւնը այդպէս չէ ցոյց տալիս:

Երևանեան նահանգի մի նշանաւոր մասը, որ ազատ էր այդ ընդհարումներից, ամբողջ Կարսի նահանգը, որ բոլորովին դուրս էր ընդհարումների ծիրանից, Թիֆլիսի նահանգի հայաբնակ տեղերը—ոչ մի աչքի ընկնող քայլ չարին կրթական գործում և հարիւրաւոր գիւղեր մնացել են բոլորովին զուրկ կրթութիւնից:

Եւ զարմանքով պէտք է արձանագրենք, որ աղէտին ենթարկված մի քանի գիւղերում գիւղացիները սովի ու վրկանքների ճիրաններում աշխատում էին անքաթող չանել ուսման գործը և մի որևէ Բադա իր աւերակների մէջ յարմարեցնում էր մի երկու սենեակ, դպրոց պահելու իր զաւակների համար:

Ի հարկէ, աղէտեալ շրջանը դպրոցական գործում շատ բան անել չէր կարող, բայց մեր օրինակը ցոյց է տալիս, որ երբ գիւղացին գիտակցում է կրթական պահանջը, նա միջոցներ էլ գտնում է կրթութեան համար:

III

Դպրոցական գործը չէ կարող առաջ գնալ առանց կազմակերպութեան, առանց ղեկավարութեան:

Հայկական կեանքում դպրոցական գործը եղել է ժողովրդի և Էջմիածնի միացած հսկողութեան տակ: Ժողովուրդը իր ընտրած հոգաբարձուներով, Էջմիածինը իր ընդհանուր վերահսկողութեամբ տարել են գործը: Իսկ այժմ սառել են երկու կողմն էլ և գործը մնացել է քայքայած վիճակում:

Անկասկած, երբ մեր երկրում կը սկսէ գործել զեմստվօն, նա կը վերցնէ իր վրա դպրոցական ցանց կազմելու և կրթական կեանքը կանոնաւորելու գործը: Բայց ինչու մենք կորցնենք տարիներ, քանի որ այժմ էլ մենք կարող ենք կրթութեան տարածման մասին հոգատար լինել և ուսում տալ ներկայ մանուկ սերնդին, որը մի քանի տարուց յետոյ այլևս անընդունակ կը լինի ուսման համար:

Ինչու մենք այսքան անկար և անընդունակ ենք: Ի՞նչն է պատճառ մեր կազմալոյծ վիճակի:

Ա. Քալանթար

ՀԵՏԵՒԵՑԷՔ ԱՅՍ ՕՐԻՆԱԿԻՆ

Թիւրքաց Հայաստանում այժմ տիրող սովի առիթով «Մշակը» այն կարծիքն արտայայտեց, որ 1) Ռուսաստանի հայ ժողովուրդը պարտաւոր է իր սովատանջ եղբայրակիցներին օգնութեան ձեռք կարկառել և ամոքել նրանց ցաւը, 2) օգնութիւնը պէտք է կատարվի այնպիսի եղանակով և ձևով, որ բուն նպատակին հասնէ, այսինքն որ տեղ հասնէ և բաշխվէ սովատանջ ժողովրդին:

Դառն փորձերը ցոյց են տուել, որ Թիւրքաց կառավարութիւնը իր սոսկալի խստութիւններով անհնարին է կացուցանում որևէ հաղորդակցութիւն մեր և Հայաստանի մեր եղբայրակիցների միջև, հէնց որ նկատում է որևէ կասկածելի միջամտութիւն անլեգալ, յեղափոխական կուսակցութիւնների կողմից: Այդ դէպքում նոյն իսկ վտանգաւոր է դառնում Թրքահայ ժողովրդի համար մի որևէ կարեկցութեան նշանի արտայայտութիւնը: Այդ պատճառով, եթէ մենք անկեղծօրէն ցանկանում ենք մեր սովատանջ եղբայրներին նիւթական օգնութիւն, այն է հաց, ուտելիք, դրամ հասցնել, մենք պէտք է վերին աստիճանի զգոյշ լինենք և օգնութիւնը կատարենք այնպիսի եղանակով, որ որևէ կասկած չը յարուցանենք կասկածոտ Թիւրքաց կառավարութեան համար, և նա առիթ ու պատրուակ չունենայ արգելելու օգնութիւնը և դրանով մեր եղբայրներին սովամահ լինելու վիճակին դատապարտելու: Հէնց այդ պատճառով մենք կտրուկ և բացորոշ կերպով արտայայտեցինք այն միտքը, որ սովատանջ Թիւրքահայերին օգնելու գործին բնաւ չը պէտք է միջամտեն անլեգալ, յեղափոխական կուսակցութիւնները, լինեն նրանք դաշնակցական, հնչակեան, այլ օգնութեան գործը պէտք է դրվի միանգամայն լեգալ հողի վրա, որպէսզի թէ նուիրատու հասարակութիւնը, թէ նպաստ ստացող սովատանջները կարողանան միշտ բաց և յայտնի հաշիւ տալ և ստանալ: Անլեգալ, յեղափոխական կուսակցութիւնների և խմբակների միջամտութիւնը, մեր կարծիքով, միանգամայն կը ջլատէ և կը մեռցնէ օգնութեան գործը, և նուէրները չեն կարող հասնել իրանց բուն նպատակին:

Ոչ. սովեալներին օգնելու գործը մարդասիրական, լեգալ գործ լինելով պէտք է որ կատարվի բացարձակապէս յայտնի կերպով, և անլեգալ կազմակերպութիւնները բնաւ չը պէտք է միջամտեն այդ գործին, այլ, եթէ յիրաւի նրանք սիրում են անկեղծօրէն հայ ժողովուրդը, նրանք բոլորովին ձեռնպահ պէտք է մնան և չը պէտք է վիժել տան օգնութեան գործը:

Մենք մատնացոյց էինք արել և օգնութեան լեգալ եղանակը:

Այսօր ուրախ ենք յայտնելու, որ մեր ձայնը չը մնաց «ձայն բարբառոյ յանապատի», և հայ հասարակութեան բանիմաց ու ժողովրդասէր անձինք, քաջ ըմբռնելով մեր ազդարարութեան կարևորութիւնը, հետևեցին մեր քարոզած մտքին:

Ստոյգ աղբիւրից մեզ հաղորդում են, որ Բագուի «Արամազդ» նաւթարդիւնաբերական ընկերութեան ղեկավարները, լցված անկեղծ տենչով իրական օգնութիւն հասցնելու Թիւրքահայ սովատանջ մեր եղբայրներին, մայիսի 8-ին ուղարկել են 5000 ռուբլի Կ. Պոլսի ռուսաց դեսպան պ. Զինովիեվին, խնդրելով հասցնել սովեալներին կամ ռուսական, ֆրանսիական հիւպատոսների և կամ հայոց առաջնորդների միջոցով:

Առաջ ենք բերում դեսպան Զինովիեվին ուղղված գրութիւնը «Արամազդ» ընկերութեան կողմից.

Ձերդ Գերազանցութիւն Իվան Ալեքսէեվիչ.—Հայ և արտասահմանեան լրագիրների հաղորդած տեղեկութիւնները ոչ մի կասկած չեն թողնում, որ Թիւրքաց Հայաստանում և գլխաւորապէս, Բիթլիսի նահանգում, տիրապետում է սովը:

Չը կամենալով անտարբեր մնալ մեր գժբախտ ազգակիցների դառն վիճակին, ցանկանալով նրանց օգնութեան հասնել, իմանալով Ձեր Գերազանցութեան մարդասիրական վեհ զգացումները, մենք համարձակութիւն ենք առնում դիմել Ձեզ և խոնարհաբար խնդրել, արդեօք հնարաւոր չէի՞ք գտնի կամ ռուսական հիւպատոսների, կամ ֆրանսիական հիւպատոսների և կամ հայոց պատրիարքարանի ու առաջնորդների միջոցով բաշխել տալ սովյալ հայերին այնտեղ, ուր սուր կարիք կայ, այս 5000 ռուբլին, որ «Արամազդ» ընկերութիւնը յատկացրել է ամոքելու դոյզն ինչ սովեալների թշուառութիւնը:

Մատուցանելով Ձեր Գերազանցութեանը մեր խորին երախտագիտութիւնը, մենք համոզված ենք, որ Դուք անուշադիր չէք թողնի մեր խնդիրքը»:

Մեր կողմից մենք միայն կարող ենք յորդոր կարդալ՝ հետևելու «Արամազդ» ընկերութեան գեղեցիկ և նպատակայարմար օրինակին՝ բոլոր նրանց, որոնք անկեղծօրէն ցանկանում են օգնել Թիւրքահայ մեր սովատանջ եղբայրներին և որոնք ցանկանում են, որ իրանց լուման տեղ հասնէ ու նպատակին գործադրվէ:

«Մշակի» խմբագրութիւնը իր կողմից պատրաստ է նուէրներ հասցնելու դեսպան Զինովիեվին կամ նրա միջոցով՝ հայոց պատրիարքարանին և առաջնորդներին:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսը ապրիլի 21-ին տուած մի կոնդակով յանուն տեղակալ Գէորգ Սուրէնեան արքեպիսկոպոսի, յայտնելով, որ ինքը մեկնում է Թիֆլիս և որովհետև Մայր Աթոռը չէ կարող մնալ առանց անմիջական հսկողութեան, ուստի յանձնում է նրան, Գէորգ արքեպիսկոպոսին, իբրև տեղակալի Մայր Աթոռի կառավարութեան և միաբաններին վերաբերեալ բոլոր գործերը:

Մի երկրորդ կոնդակով, գրված ապրիլի 26-ին, նոյն տեղակալի անունով, յայտնելով, որ դիւանապետ Ներսէս վ. Մելիք-Թանգեանը արձակված է դիւանապետութեան պաշտօնից և ժամանակաւոր դիւանապետ է նշանակված Մեսրոպ վ. Մաքսուտեանը, կաթողիկոսական դիւանը դնում է նրա՝ Սուրէնեան արքեպիսկոպոսի հսկողութեան ներքոյ, մինչև դիւանապետի վերջնական ընտրութիւնը:

—

Բագուից մեզ հաղորդում են. «Երէկ, մայիսի 10-ին, Թէհրանից Բագու հասաւ Պարսից Շահի արտակարգ դեսպանութիւնը, որի գլուխն է Պետերբուրգի պալատից դեսպան Մուշիր-Միւլքը և որին յանձնված է միսսիա՝ գնալ եւրոպական արքունիքները և պաշտօնապէս ծանուցանել Մահմադ-Ալի Շահի գահակալութիւնը:

Մանթաշեանի Բիբի-Էյբաթ պրոմիսլայի և Լիանոզովի պրոմիսլայի բանուորները գործադուլ են արել:

Մայիսի 7-ից գործադուլ են արել և ձիաքարշի բոլոր ծառայողները, ներկայացնելով զանազան տնտեսական պահանջներ:

Բագուի մթնոլորտը առհասարակ յուզալից է»:

—

Թէհրանից մեզ հաղորդում են. «Այստեղի մէջլիսը (պարլամենտը) այնպիսի խիստ պահանջներ ներկայացրեց Աթաբէկի նախագահութեամբ կազմած կաբինետին, որ Աթաբէկը ստիպվեց իր հրաժարականը ներկայացնել մէջլիսին»:

—

Մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ վերջին երկու օրը անձրև է եկել Ղազախի գաւառի ընդարձակ մասում, սկսած Աղստաֆից մինչև Դիլիջան: Ազգաբնակութիւնը յոյս ունի, որ անձրևից կը կազդուրվեն ցանքսերը:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մայիսի: Դումայական ագրարային մասնաժողովը, որ կայացաւ Կուտլէրի նախագահութեամբ, ձեռնարկելով ստիպողական գրաւման սկզբունքի պարտադիր լինելը քննելու, լսեց սահմանադիր-ռամկավարների և աշխատաւորականների ճառերը: Աջակողմեանները ապացուցանում էին, որ անկարելի է անմիջապէս վճիռ կայացնել, քանի որ մասնաժողովը իր ձեռքի տակ փաստացի ստատիստիքական տեղեկութիւններ չունի, որոնք իբրև հիմք են ծառայելու լուծման: Ձախակողմեանները առաջարկում են վիճաբանութիւններին վերջ տալ: Այս առաջարկութիւնը ընդունվում է 45 ձայնով ընդդէմ 15-ի: Աջակողմեանները, ինչպէս և լեհական կոլոյի անդամները հեռանում են դահլիճից: Նրանց բացակայութեան ժամանակ ընդունվում է ստիպողաբար գրաւման պարտաւորութիւնը: Հեռացած պատգամաւորները որոշեցին բողոքել Պետական Դումայի մասնաժողովի գործողութիւնների առիթով, ինչպէս և նախագահի դէմ, որը զրկել է նրանց իրանց կարծիքը արտայայտելու այդօրինակ լուրջ և կարևոր հարցի նկատմամբ:

ՏՕՄՍԿ, 9 մայիսի: Դումայի անդամներ ընտրվեցին երեք սահմանադիր-ռամկավարներ—գիւղացի Միակշին, պրոֆէսոր Ռոզինը, երդուեալ-հաւատարմատար Բոլոգոդսկին: Մայիսի 10-ին կը կայանայ մնացած երեքի ընտրութիւնը:

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Մայիսի 4-ին

Այսօրվայ նիստը կրում էր միանգամայն բացառիկ բնաւորութիւն: Թէև այսօրվայ նիստի օրակարգի մէջ նշանակված էր, որ ի միջի այլ հարցերի, Դուման պէտք է քննի և տերրորիստական սպանութիւնների հարցը, բայց օրակարգի մէջ այնքան շատ հարցեր կային, որ արդէն բացայայտ էր, որ այսօր այդ հարցը կը յետաձգվի:

Նախ Դուման զբաղվեց Պետական Դումայի շտատների հարցով: Անցեալ նիստում Դուման արդէն ընդունել էր շտատները, իսկ այսօր խմբագրական մասնաժողովը զեկուցեց Դումային այդ յօդուածները վերջնական խմբագրութեամբ և Դուման հաստատեց այդ:

Երկրորդ հարցը—ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օրինագիծն էր ընդհանուր ուսումն մտցնելու վերաբերեալ:

Առաջինը խօսում է Հեսսենը (կադետ): Նա գտնում է, որ ըստ էութեան երկար չը պէտք է խօսել, որովհետև բոլորին յայտնի է մեր դպրոցական պայմանները և թէ ինչ դրութեան մէջ է գտնվում այժմս ուսման գործը Ռուսաստանում, և որպէս զի հնարաւորութիւն լինի ըստ կարելոյն շուտով կանոնաւորել և հարկաւոր բարձրութեան հասցնել մեր դպրոցները, անհրաժեշտ է անյապաղ դիմել օրինագծի քննութեան և լուծման: Որովհետև այդ հարցը շատ բարդ հարց է և պահանջում է բազմակողմանի քննութիւն և լուսաբանութիւն, այդ պատճառով ճառախօսը առաջարկում է յանձնել օրինագիծը կոմիսիային: Բացի դրանից նա առաջարկում է այդ կոմիսիային յանձնել բոլոր այն մանր հարցերը, որոնք վերաբերում են ժողովրդական լուսաւորութեան հարցին: Այսպէս, օրինակ, եթէ մինիստրութիւնը ստանում է խնդիրքներ մի որևէ տեղ նոր դպրոցներ և այլ այդ տեսակ հիմնարկութիւններ հիմնելու մասին, այդպիսի հարցերը Դուման կը յանձնի կոմիսիային և այնտեղ կը ստանայ իր շուտափոյթ վճիռը: Եթէ մինչև այժմս մենք գանգատվում էինք մինիստրութեան վրա, որ այնտեղ գործերը դանդաղ էին կատարվում և դպրոցական գործը մասամբ այդ պատճառով կաղում էր, պէտք է այնպէս անել, որ նոյն մեղադրանքը չը բարդվի մեզ վրա, որովհետև այսուհետև մինիստրութիւնը միշտ կարող է ասել, որ Դուման է ուշացնում, եթէ մենք իսկապէս դրան առիթ ներկայացնենք։ Հեսսենը մատնանիշ է անում և այն հանգամանքի վրա, որ մինիստրութիւնը ստանում է նոյնպէս խնդիրքներ շինութիւնների համար, օրինակ դպրոցների շինութեան կամ զանազան գիտական պարապմունքների համար հիմնարկութիւնների վերաբերմամբ։ Ճառախօսը առաջարկում է այդ հարցերն էլ յանձնել այն կօմիսիային, որը շուտափոյթ կերպով ներկայացնելով Դումային, հնարաւորութիւն կը տայ առկախ հարցերը վճռելուն։

Լուսաւորութեան մինիստրը երկար ճառ է արտասանում, որի մէջ նա մի շարք ստատիստիքական տեղեկութիւնների հիման վրա ուզում է համոզել Դումային, որ ընդհանուր ուսումը անհրաժեշտ է Ռուսաստանում։ Նրա թւերից երեւում է, որ բուն Ռուսաստանի, կենտրոնի ազգաբնակութիւնը աւելի անգրագէտ է քան միւս մասերի ռուս ազգաբնակութիւնը և որ Ռուսաստանի ծայրերում, ուր ապրում են և օտարազգիներ, այնտեղ գրագէտների տոկոսը աւելի շատ է։ Մինիստրը ասում է, որ այժմ գոյութիւն ունի Ռուսաստանում 90,000 դպրոց, բայց նայած իր մեծութեան և ուսման հասակին հասածներին, պէտք է ունենար 160,000 ժողովրդական դպրոցներ. այդ պատճառով էլ ուսման հասակին հասած 12 միլիօն երեխաներից այժմ ուսում են ստանում միայն 5 միլիօնը։ Նա կարծում է, որ դպրոցը կարող է իր կոչման բարձրութեան վրա կանգնել այն ժամանակ, երբ դպրոցից հեռացրած կը լինի պօլիտիկան և աշակերտները և ուսուցիչները կըզբաղվեն միմիայն դպրոցական գործով։

Արխանգելսկին (ս.-յ.) կարծում է, որ նախ քան այդ հարցը կօմիսիային տալը, Դուման պէտք է ընդհանուր նիստում պարզէ իր համար այդ հարցը, որովհետև դա ամենաէական և անհրաժեշտ հարցերից մէկն է, և դրա այս կամ այն ուղղութիւնից շատ բան է կախված։

Լեհական կօլօյի կողմից խօսում է և ասում, որ դպրոցական հարցը նոյնքան կարեւոր նշանակութիւն ունի նրանց համար, որքան և Ռուսաստանի միւս մասերի համար, բայց դպրոցական գործը ոչ մի տեղ այնքան ծանր պայմանների մէջ չէ եղել, որքան Լեհաստանում։ Նա երկար կանգ է առնում այն հանգամանքի վրա, թէ ինչպիսի խստութիւններ են գործ դրւում եղել այնտեղ լեհական լեզուն արմատախիլ անելու և կծու ու սրամիտ կերպով, փաստաթղթերով ապացուցանում է, որ լուսաւորութեան մինիստրութիւնը եղել է ներքին գործերի խաղալիք։

Մահմեդականների կողմից խօսում է Ջէյնալովը։ Նա նախ և առաջ յայտնում է, որ ինքը միանում է ժողովրդական ազատութեան կուսակցութեան առաջարկին, որ այդ հարցը պէտք է տալ կօմիսիային, որպէս զի շուտով կարելի լինի շօշափելի հետեւանքների հասնել, յետոյ նա անցնում է մինիստրի ասածներին և յայտնում է, որ մինիստրը թւելով մէկ առ մէկ, թէ ո՛ր ազգութիւն որքան տոկոս գրագէտներ ունի, ոչ մի խօսք չասեց մահմեդականների մասին։ «Ես միանգամայն հասկանում եմ, ասում է ճառախօսը, թէ ինչու պ. մինիստրը մեր մասին ոչինչ չասաց, որովհետև նրան ամօթ էր թւել այն չնչին թւերը, որոնք նշանակված են։ Մահմեդականների մէջ գրագիտութիւնը ամենաքիչն է տարածված, և դրա պատճառը այն է, որ կառավարութիւնը սիստեմատիկ կերպով ճնշում է եղել մեզ, զրկում է եղել մեզ մեր ազգային ուսումնարաններից։ Թող մինիստրը ինձ պատասխանի, թէ ինչն է պատճառը, որ բոլոր մահմեդական պետական ժողովրդական դպրոցներում այնքան քիչ աշակերտներ կան։ Դրա պատճառը այն է, որ մեզնում դպրոցը գոյութիւն ունի ոչ թէ նրա համար, որ երեխան այնտեղ ուսում ստանայ, այլ դպրոցը քաղաքական նպատակների է ծառայում»։ Ճառախօսը նոյնպէս կանգ է առնում և այն սիստեմի վրա, որով ստիպում են ուսուցիչներին դասաւանդել դպրոցներում, որ շատ անգամ ուսուցիչը ստիպված է լինում զանազան անասունների ձայն հանել, որպէս զի հասկացնէ երեխաներին կարդացածի միտքը, որովհետև ուսուցիչները իրաւունք չունեն իրանց մայրենի լեզւով երեխային հասկացնել ամեն ինչ։

Պատգամաւոր Տիգրանեանի ճառը շատ լաւ տպաւորութիւն թողեց, ափսոս որ նրա ձայնը ուժեղութիւն չունի և այդ պատճառով զգալի կերպով տպաւորութիւնը թուլանում է։ Նրա ճառը ծրագրային և գեղեցիկ էր։ Ճառախօսը քննադատելով կառավարութեան քաղաքականութիւնը դպրոցական գործում, ասում է, որ ժողովրդական դպրոց—անունով կայ, բայց իրականութեան մէջ գոյութիւն չունի, որ կառավարութիւնը ցանկացել է ոչ թէ ուսում տարածել, այլ զբաղված է եղել պօլիտիկայով։ Լուսաւորութեան մինիստրութիւնը իրապէս եղել է ներքին գործերի մինիստրութեան բաժանմունքը և այդ պատճառով էլ նա ոչ մի ժամանակ իր ինքնուրոյն ծրագիր չէ ունեցել, այլ առաջնորդվելիս է եղել պօլիցեական հրահանգներով։ Այնուհետև յիշելով, որ մինիստրութիւնը ոչ մի քայլ չէ արել մինչև այժմ ժողովրդական լուսաւորութեան գործը լաւ հիմքերի վրա դնելու, ճառախօսը ասում է, որ մինիստրութիւնը անցեալ Դումային ներկայացրել էր մի առաջարկութիւն, տալ Իւրեւի համալսարանի լուսացարանի և ջերմանոցի համար յայտնի գումար, իսկ այս տարվայ ներկայացրած օրինագծերից միայն մէկն է էականը—ընդհանուր ուսման հարցը։ Մինիստրը ասում է, որ ժողովուրդը հասկացել է այժմ ընդհանուր ուսման անհրաժեշտութիւնը. բայց ոչ, ասում է ճառախօսը, ոչ թէ ժողովուրդն է այժմ հասկացել ընդհանուր ուսման անհրաժեշտութիւնը, այլ ընդհակառակը դուք էք այժմ հասկանում, որ ուրիշ կերպ անկարելի է տանել լուսաւորութեան գործը։ Այնուհետև պատգամաւոր Տիգրանեանը անցնում է մեր դպրոցներին և չեշտում է, որ կառավարութեան նշանակած ուսուցիչները բոլոր ժամանակը զբաղված են եղել ռուսիֆիկացիայով, որ նրանք ռուսաց լեզուն սովորեցնում են եղել ոչ թէ իբրև լեզու, այլ իբրև անհրաժեշտ մի պարտաւորութիւն, և դրա հետեւանքն այն է եղել, որ այդ լեզուն մինչև այժմ էլ չեն սովորել։ Ժողովրդական լուսաւորութեան գործը պէտք է լինի իր՝ ժողովրդի ձեռքում և միմիայն այդ դէպքում, երբ ամեն մի ժողովուրդ, ազգ դպրոցական գործը կը կանոնաւորէ իր պահանջների համեմատ, այն ժամանակ կարելի է սպասել որ դպրոցը կանգնած կը լինի իր բարձրութեան վրա. ուրիշ խօսքով առաջարկում է ապակենտրոնացնում (դեցենտրալիզացիա և նացիօնալիզացիա)։

Դուման որոշում է, որ ամեն մի ճառախօս կարող է խօսել ոչ աւել քան 10 րօպէ։

Պատգամաւոր Վօզնեսենսկին սկսում է նրանից, որ ժողովրդական դպրոցներում ամեն ինչ արգելվում է, որ շատ անգամ գիւղական ուսուցիչներին պատժում, տուգանքի են ենթարկում նրա համար, որ նա իբր թէ աշակերտների մէջ յեղափոխական պրօպագանդա է անում։ Բայց երբ որ մարդ մտածում է, որ փոքր երեխաները անընդունակ են մինչև անգամ ըմբռնելու սօցիալիստական գաղափարները, այն ժամանակ պարզվում է, որ ուսուցիչներին բոլորովին ուրիշ պատճառով են քշում մէկ տեղից միւսը։ Կառավարութեան հարկաւոր չէր, որ ժողովուրդը ուսում առնէ, զարգանայ, և այդ պատճառով ամեն ջանք գործ էր ածվում, որպէսզի երեխաները ուսումնարաններում բան չը սովորեն, իսկ շատ տեղերում փակում էին ուսումնարանները առանց պատճառի։ Բայց դեռ ժողովրդական ուսումնարանները շատ լաւ դրութեան մէջ են համեմատած եկեղեցական-ծխական դպրոցների հետ. այնտեղ ամեն ինչ խայտառակութեան է հասցրած և երեխաներին հոգևոր ուսում տալու տեղ, որպէսզի այնտեղից դուրս գան քահանաներ, այնտեղ պատրաստում են ժանդարմներ (աջակողմեանները բողոքում են, ձախակողմեանները ծափահարում)։ Եպիսկոպ. Եւլօգին բղաւում է. «ինչպէս ամօթ չէ», իսկ ճառախօսը փաստերով ապացուցանում է, որ այդպէս է։ Պուրիշկեվիչը բոլոր ժամանակը խօսում է, բացականչութիւններ է անում, մինչև որ Գօլօվինը նրան յիշեցնում է, որ հանդարտանայ։

Պատգամաւոր Հասանովը սկսում է իր ճառը նրանից, որ կառավարութիւնը սաստիկ ճնշում է մահմեդականներին և դեռ նորերս մի օրէնք է հրատարակել, որով արգելվում է ուսուցիչներին դասարանում մայրենի լեզւով խօսել, այլ պէտք է անպատճառ ռուսերէն լեզւով խօսել։ Այդ օրէնքից յետոյ ուսումնարանները մէկ անգամից դատարկվեցին, որովհետեւ ազգաբնակութիւնը համոզվեց, որ այնտեղ ոչ թէ ուսում են ուզում տալ, այլ բոլորովին ուրիշ սկզբունքներով են առաջնորդվում։ «Պէտք է, ասում է Հասանով, թոյլ տալ, որ ամեն մի ազգ իր մայրենի լեզւով ստանայ իր սկզբնական ուսումը»։ Աջակողմեանները բղաւում են թէ՝ գնացէք այդ դէպքում Տաճկաստան։ Նախագահը զանգահարում է և խնդրում է կարգապահութիւն պահպանել, իսկ պատգամաւոր Հասանովը պատասխանում է աջակողմեաններին, թէ ինարկէ, եթէ մեզ այդ տեղը հասցնէք, գուցէ և գնանք։ Նախագահը նկատում է պատգամաւորին, որ նա վիճաբանութեան մէջ չը մտնի և շարունակի իր ասելիքը։ Պատգամաւորը շարունակում է պարզել իր միտքը, որ անհրաժեշտ է մայրենի լեզւով սկզբնական ուսում տալը։ «Բայց այդ դրութիւնը տիրում էր առաջ, երբ գոյութիւն ունէր լիազօր ինքնակալութիւնը, բայց»… Աջակողմեանները չը թողին վերջացնել խօսքը։

Պատգամաւոր Կելեպօվսկին սկսեց բղաւել, թէ «սամօդերժավիան այժմ էլ միանգամայն լիազօր է և ոչ ոք իրաւունք չունի»… Աղմուկը սաստկացաւ, աջակողմեանները սկսեցին աթոռներով թխթխկացնել, իսկ Հասանովը տրիբունայից բարձրաձայն նրանց դիմելով ասում է՝ այժմ սահմանադրական կառավարութիւն է։ Աջակողմեանները պահանջում են, որ ճառախօսը ամբիօնից հեռանայ, իսկ Դումայի միացած մասը պահանջում է շարունակել։ Այնպիսի աղմուկ է բարձրանում, որ նախագահի զանգի ձայնը չէ լսվում։ Վերջապէս ձախակողմեաններին աջողվում է իւրայիններին լռեցնել, յետոյ և աջակողմեանները լռում են, որպէս զի լսեն Գօլօվինի խօսքերը։

Գօլօվինը ասում է, որ շնորհիւ այն բանի, որ մի քանի պատգամաւորներ անտեղի աղմուկ են բարձրացնում, առաջարկում է հանգստանալ և ճառախօսին թոյլ տալ շարունակել իր ճառը։ Նորից բարձրանում է ահագին աղմուկ։ Պատգամաւոր Կելեպօվսկին սարսափելի ձայնով ինչ որ բղաւում է, Պուրիշկեվիչը կատարեալ գժի նման նոյնպէս ինչ որ բղաւում է, իսկ Սազօնովիչը բարձրաձայն մի քանի անգամ աղաղակում է. «ամօթ ձեզ, ժողովրդական ազատութեան կուսակցութիւն»։ Ամբողջ Դուման գլորւում է. բոլոր պատգամաւորները ոտքի են կանգնած, նախագահը և փոխնախագահները նոյնպէս ոտքի են կանգնել։

Վերջապէս մի քանի ժամանակից յետոյ աջողվում է լռեցնել տալ։ Գօլօվինը առաջարկում է զրկել պատգամաւորներ Կելեպօվսկուն, Սազօնովիչին և Պուրիշկեվիչին իրաւունքից ներկայ լինելու այսօրվայ նիստին։ Դուման համաձայնվում է այդ առաջարկութեան հետ։ Գօլօվինը յայտարարում է ընդմիջում և ասում, որ պատգամաւորները դուրս գան դահլիճից, իսկ յետոյ այդ երեքին չը պիտի թոյլ տրվի մտնել դահլիճը։

Ահագին աղմուկ է բարձրանում, բայց պատգամաւորները կամաց կամաց թողնում են դահլիճը, միայն աջակողմեանները խմբված են դահլիճի մէջ տեղում և շուտով պարզվում է, որ այդ երեքը վճռել են դահլիճից չը հեռանալ։

Գօլօվինը վերսկսում է նիստը և հնարաւորութիւն է տալիս այն երեք պատգամաւորներին բացատրել իրանց վարմունքը։ Կելեպօվսկին սկսում է խօսել, թէ նա թոյլ չի տայ, որ կայսրի անունը այստեղ անուանարկեն և կամ պրօվօսլաւնի եկեղեցուն դիպչեն։ Գօլօվինը նրան պատասխանում է, որ այստեղ ոչ ոք դրանց չէ անուանարկել, և որ նրանք պատժվում են ոչ թէ նրա համար, որ սկսել են եկեղեցին կամ կայսրին պաշտպանել, այլ նրա համար, որ նրանք աղմուկ են հանում և այդպիսով խանգարում Պետական Դումայի պարապմունքները։ Սազօնովիչը սկսում է ասել, թէ նա այստեղ եկել է, որ պէսզի արդարութիւն տեսնէ, իսկ այստեղ միայն խայտառակութիւն է տեսնում. այդ խօսքից յետոյ նախագահը զրկում է նրան խօսքից։ Վերջինը—Պուրիշկեվիչը, հէնց որ բարձրանում է ամբիօնը, սկսում է բղաւել և ասել, որ ինքը չէ մասնակցել այդ աղմուկին. դիմում է կադէտներին և ինչ որ բան է բղաւում. ընդհանուր աղմուկի մէջ նախագահը դրան էլ է զրկում խօսքից։

Գօլօվինը առաջարկում է նրանց թողնել դահլիճը, բայց նրանք չեն ցանկանում. այն ժամանակ նա առաջարկում է Դումային զրկել այդ երեք պատգամաւորներին իրաւունքից ներկայ լինելու 15 նիստի, և ասում է, որ նորից յայտարարում է ընդմիջում և եթէ այդ երեք պատգամաւորները կրկին մնան դահլիճում, այն ժամանակ նա ստիպված կը լինի ոյժի դիմել։

Նորից աղմուկ, նորից պատգամաւորները դուրս են գալիս և էլի աջակողմեանները հաւաքվել են, բայց այս անգամ արդէն այնպէս խրոխտ չեն խօսում, այլ ընդհակառակը համոզում են այդ երեքին, որ հեռանան դահլիճից։ Շուլգինը բոլոր ժամանակ համոզում է Պուրիշկեվիչին դուրս գալ, իսկ սա ընդհակառակը նստում է իր տեղը և ձեռքն է առնում լրագիր, իբր թէ կարդում է։

Գօլօվինը զանգահարում է և յայտնում, որ երեք պատգամաւորներից միայն մէկը—Պուրիշկեվիչը չէ ուզում ենթարկվել Պետական Դումայի վճռին և նա ստիպված է դիմել ոյժի, բայց նա չէ ցանկանում դիմել այդպիսի մի միջոցի և այդ պատճառով փակում է ներկայ նիստը և յայտնում է, որ ինքը կարգադրութիւն կանի, որպէսզի այդ երեք պատգամաւորներին թոյլ չը տրվի յետագայ նիստերին մասնակցելու։ Պուրիշկեվիչը բղաւում է. «ես երկուշաբթի օրը նստած կը լինեմ իմ տեղումս»։ Իսկ նախագահը փակում է նիստը։

Երկուշաբթի օրը Դումայի զբաղմունքի առարկաներն են. 1) արդարադատութեան նախարարի բացատրութիւնը այն հարցապնդմանը, որը վերաբերում է Ներչինսկիյ շրջանի Ալգաչինսկիյ բանտի քաղաքական յանցաւորներին տանջանքների ենթարկելուն, 2) ագրարային հարցը, 3) ընթացիկ գործեր։

Արսէն Քալանթար

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԷՏՔ Է ԱՌՆԵԼ ՆԱԵՒ ՄԵՐ ԱՂԷՏԵԱԼՆԵՐԻՆ

(Զեկուցված Նպաստամատոյց Յանձնաժողովի մայիսի 7-ի նիստում)

Բացի այն գումարներից, որ կառավարութիւնը տալիս է քաղցածութեան մատնված ժողովրդին, իբրև փոխառութիւն յատկացրել է նաև վեց միլիօն րուբլի գումար ձրիապէս բաժանելու համար այն աղէտեալներին, որոնք ամենածայրայեղ դրութեան մէջ են։

Մեր Անդրկովկասը և մասնաւորապէս հայ ազգաբնակութիւնը վերջին երկու տարիները այնպիսի սարսափելի աղէտների ենթարկվեցին, որ եթէ կան ծայրայեղ չքաւորներ և կարօտեալներ, այդ մեր երկրի աղէտեալներն են։

Արդարև եթէ վերցնենք միայն այն հայ գիւղերը, որոնք կործանվեցին և աւերվեցին, մենք կը տեսնենք, որ մօտ 2200 տուն կամ 11,000 հոգի գտնվում են յետին աստիճանի թշուառութեան մէջ, որովհետև կորցրել են տուն, տնային անասուններ, տան պարագաներ և ամբողջ տնտեսութիւնը։

Ամեն մի աւերված տուն նորոգելու, անհրաժեշտ գոյքը և անասունները ձեռք բերելու և տնտեսութիւնը վերականգնելու համար հարկաւոր է 500 րուբլի, որովհետև տունը, որքան էլ նա հասարակ լինի, դարձեալ կը պահանջէ 150 րուբլի գումար, մի զոյգ եզը կարժենայ 60—70 րուբլի, տան գոյքը և գործիքները (սայլ, արօր, մանգաղ) կը պահանջեն մի 80 րուբլի, ուտելու հացը և սերմացուն մի տարվայ ընթացքում կը նստեն ոչ պակաս քան 200 րուբլի, դեռ չենք հաշւում զանազան տուրքերը, որոնք պահանջվում են գիւղացիներից։

Եթէ ենթադրենք, որ աղէտեալները մի որևէ օգնութիւն ստացել են որևէ տեղից և վերցնենք մեր ցոյց տուած գումարի միայն կէսը և տանք գիւղական ամեն մի աւերված տան 250 րուբլի, այն ժամանակ 2200 տան համար կը պահանջվի նպաստ 550,000 րուբլի։

Այդ բոլորովին կործանված և աւերված գիւղերի թւին պատկանում են՝ Բաղաբենդ, Ղազաղլու, Ղարադաղլու, Խօյլար, Կըրզան, Սարով, Մարալեան, Հասանղայա, Խօրուզլու, Ղազանչի, Եարըմջա, Ներքին Զայլու, Սէյսուլան, Մինքեանդ, Ալիղուլիքեանդ, Հարար, Ջէյվա, Ղալաջըղ, Ղարաքարա, Ուլիանորաշէն, Քեշտազ, Էրմանիբազար, Մամաթեա, Մազուրդու, Քեանդակ, Հաւարիկ և ուրիշներ։

Այնուհետև գալիս են այնպիսի գիւղեր, որոնք չեն կորցրել իրանց տները, բայց չափազանց սաստիկ վնասվել են։ Դրանց թիւն է 6723 և դրանց օգնելու համար պահանջվում է մինչև թւով 100 րուբլի ամեն մի տան վրա, ընդամենը 672,300 րուբլի։ Դրանից յետոյ նպաստի կարօտ են այնպիսի վնասվածները, որոնք ունեն գոյք, տան անասուններ, բայց հացի և սերմացուի միջոցներ չունեն։ Այդպիսիների թիւն է 4475 տուն, որոնցից իւրաքանչիւրին հարկաւոր է մինչև թւով 60 րուբլի, ընդամենը 268,500 րուբլի։

Եթէ գումարենք բոլոր առաջ բերած թւերը, կը տեսնենք, որ նպաստ պահանջվում է 1,490,800 րուբլի, մօտ $1^{1}/_{2}$ միլիօն։

Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովի վրա պարտականութիւն կայ կովկասեան Փոխարքայի միջոցով խնդրամատոյց լինել յատկացնելու ձրիաբար հայ աղէտեալներին մի մասը կառավարութեան նշանակած վեց միլիօն րուբլի գումարից, որի կարգադրութիւնը վերապահված է մի յատուկ մասնաժողովի՝ Ա. Երմօլօվի նախագահութեամբ։

Ա. Ք.

ՎԻԲՕՐԳԻ ԿՈՉԻ ԱՌԻԹՈՎ

Մայիսի 2-ին առաջին Պետական Դումայի անդամները կանչված էին դատաստանական քննիչ Բէլեվցովի մօտ ծանօթանալու քննութեան ամբողջ գործի հետ, որը բաղկացած է 13 հատորից, ամեն մէկը 300—500 երես բովանդակութեամբ։

Մի ոչ մեծ սենեակում հաւաքվել էին Դումայի նախկին անդամներ Նաբօկով, Գելլար, հայր Օգնեվ, Պետրունկեվիչ, Պետրաժիցկի, Գրեդեսկուլ և ուրիշները։ Հաւաքվածները ընդամենը 30 հոգի էին։

Մինչև քննիչի ներս մտնելը առաջին Դումայի անդամները չափազանց աշխոյժ խօսում էին, ոմանք առաջարկում էին բանալ առաջին Դումայի նիստը։ «Մուրօմցեվը այստեղ չէ»—նկատում էր մի ուրիշը։ «Գրեդեսկուլը—նրա օգնականը այստեղ է, բանանք նիստը»,—լսվում էին ուրախ նկատողութիւններ այս ու այն կողմից։

Եկաւ քննիչը և հրաւիրեց իր դիւանատունը։

—Ես ձեզ հրաւիրել եմ,—շփոթվելով ասաց քննիչը,—ծանօթացնելու ձեզ կատարված քննութեան ամբողջ գործի հետ։ Ես կարդամ, թէ դուք ինքներդ աչքի կանցկացնէք. գուցէ կուզենաք որևէ մի բան աւելացնել։

Նախկին պատգամաւորներից ոմանք հրաժարվեցին «բան աւելացնել»։ Հրաժարվեցին Պետրունկեվիչը, Ռօսսեցնը, Պետրաժիցկին, Գրեդեսկուլը և ուրիշ մի քանի հոգի էլ։ Շատերը գտան, որ անհրաժեշտ է գոնէ հարևանցի կերպով ծանօթանալ կատարված քննութեան հետ։ Վերջիններիս այդ փորձը մեծ օգուտ տուեց՝ երևան հանելով չափազանց ուշագրաւ փաստեր։

Նաբօկովը առաջին անգամ կատարված քննութիւնից ի միջի այլոց իմացաւ, որ իբրև մեղադրւում են Վիբօրգի կոչը զինւորների մէջ տարածելու համար։ Բանից երեւում է, որ նոյնիսկ գտնվել է մի ականատես վկայ։ Նաբօկովը ժպտալով արտասանեց. «Ամեն բան սպասելի էր, բայց այս սիւրպրիզը անսպասելի էր»։

Այդ անսպասելի հանգամանքը հարկադրեց միւսներին էլ ծանօթանալ քննութեան նիւթերի հետ։ Երևան եկան ուրիշ կուրիօզներ էլ։

Պրոտոպոպովին ցոյց են տալիս մի ծրար, որը գտնված է եղել մի ինչ որ տեղ՝ Պետերբուրգում։ Ենթադրում են, որ այդ ծրարում Պրոտոպոպովը դրած է եղել վիբօրգեան կոչի համարները։

Եւ այդպիսի շատ ուրիշ բաներ։

Քննիչը անհրաժեշտ համարեց հանգստացնել ներկայացողներին, ասելով՝

—Դրանք դատարկ բաներ են, դատարանը կարող է անհետևանք թողնել ձեր գործը։

—Ձեր նայելով դրան, նախկին պատգամաւորները խօսում էին, որ կարող է պատահել՝ նրանց աքսորեն հեռաւոր տեղեր։

—Ի՞նչ անհանգստանալու բան կայ. կը գնանք Սիբիր։ Միայն թէ թող թոյլ տան միասին ապրելու։ Հասարակապետութիւն կը յայտարարենք, նախագահը կը լինի Մուրօմցեվը։

Այս խօսքերը մեծ բաւականութիւն պատճառեցին նոյն իսկ դատաստանական իշխանութեան ներկայացուցչին։

—Չ՞է կարելի, պարոն քննիչ, Վիբօրգի կոչի պատճէնը ստանալ,—հարցրեց ներկայ եղողներից մէկը։

—Չեմ կարող,—պատասխանեց քննիչը։

—Իսկ ամբողջ գործի պատճէնը կարելի՞ է ստանալ որպէս մեղադրվող,—հարցրեց Կ. Գելլաթը։

—Կարող էք, իրաւունք ունէք,—դանդաղ կերպով ու զարմանքով պատասխանեց քննիչը։—Ի՞նչ հարկաւոր է նա ձեզ։ Չարժէ։ Դուք կատակ էք անում երևի…—հարցնում է քննիչը պատգամաւորներին։

—Ես լուրջ կերպով խնդրում եմ։

—Եթէ ամենքն էլ պատճէնը խնդրելու լինեն, դրա համար ամբողջ 3 տարի կը հարկաւորվի. չէ՞ որ ամբողջ գործը բաղկացած է 13 հատորից և 5000 երեսներից։

—Բան չը կայ,—հանգստացնում էին քննիչին։

—Տպագրեցէք պետական տպարանում։

Երբ պատգամաւորները իմացան, որ պատճէնը տրվելու է ձրի, իսկոյն իրար ետևից սկսեցին պատուիրել քննիչին և խնդրեցին պատրաստել ամբողջ գործի քննութեան համարները։ Քննիչի համար, ինչպէս երեւում է, այդ բանը բոլորովին անսպասելի էր, բայց և այնպէս պատուէրները ընդունեց։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

—Մէկ չէ, երկու չէ, երեք չէ… սրանից յետոյ ամեն օր այդպէս կը լինի…

—Մարդ, ինչ է պատահել։

Մախաթեանը իսկոյն չը պատասխանեց։ Կինը երբեք այդ դրութեան մէջ չէր տեսել նրան. նա փոքր ինչ շփոթվեց և սրտատրոփ սպասում էր լսել մի անհարկու նորութիւն։

—Ասա, մի բան կայ…

—Ջուր տուր…

Երբ Մախաթեանի յուզմունքը մի քիչ նստեց, նա խոր հոգոց հանեց ու ասաց.

—Ես քեզ ասել եմ, որ գաւառումս նոր յաջորդ են նշանակել։

—Ե՞…

—Էլ ինչ է՛։ Բանն այս է, որ այդ յաջորդը միևնոյն ժամանակ օրէնքով է՛ մեր հոգաբարձութեան նախագահն է. հոգաբարձուները խոմ գիտես ովքեր են. մի չարչի, մի մսու ղասաբ, մի դրագիր. ինչպէս փչես՝ այնպէս էլ կը խաղան. Փարաջայի փէշերին մատաղ են գնում։ Դպրոցի գլխին տէր ու տիրական է մնում մեր հայր-սուրբը։

—Միշտ այդպէս է եղել։

—Եղել, եղել է, հոգիս, բայց նախկին յաջորդը կամքի տէր մարդ էր ու մեզ արդէն ճանաչել էր։ Սա հետը մի ուսուցիչ է բերել ու դպրոց խցկել։ Ասեմ, կարիք կա՞ր։ Իր բարեկամն է, ինչ է, չը գիտեմ, քրոջ որդի պիտի լինի թէ անհրաժեշտ. Հիմա, ասում են, թէ եկող սեպտեմբերից սրան աւագ ուսուցչութիւն պէտք է տայ։

—Տալիս է՞ տայ։ Միևնոյն չէ՞ քեզ համար ով կը լինի աւագ ուսուցիչ։ Թող Միքայէլեանը հոգս անի։

—Օրօրմէ՛ք քո հօրը… լաւ ասացիր, կնիկ։ Միքայէլեանը իր բանը այս գլխից է ուզում տեսնել ու պինդ բռնում է հոգաբարձուների ու մի քանի պատւաւոր քաղաքացիների օձիքից, որ սրանք դէմ լինեն Միքայէլեանի հեռանալուն։ Նորեկն էլ խոմ այնպէս է խօսում իր իրաւունքների մասին, որ… համալսարանաւարտ եմ, դիպլօմ ունեմ, տարիներ եմ մաշել… Եւրօպա եմ գնացել, Շվէյցարիա, Գերմանիա, էլի։

—Շվէյցարի՞ա…

—Բան չունեմ… Սովորելու է գնացել երկու-երեք տարի թէ և է տուել՝—ով գիտէ երբեք անգամ ոտքը համալսարանի դռնով ներս չէ դրել։ Ռեկլամ։ Կուզես, ես էլ մի տարի Գերմանիա գնամ։ Թէկուզ պրօֆեսոր. ծխական դպրոցի ինչին է պէտք։ Այստեղ հմուտ արհեստաւոր է հարկաւոր, նախապատրաստված, փորձված մանկավարժ։ Մեր մարդը շուք սիրում է. «Ն-ի դպրոցի աւագը համալսարանաւարտ է»։ Բաս չէ. երկնքից աստղեր ցած կը բերի. թող մի դասարան մտնի ու կարգ պահպանի։

Մախաթեանը սկսեց բացատրել կնոջը ցենզի, դիպլօմի, վկայականի նշանակութիւնը հիմիկվայ ժամանակներում։ Ինքը մեծ կրթութիւն չէր ստացել և այդ հարցը նրա ցաւոտ տեղն էր։ Տասնհինգ տարի ծառայում էր, օրինակելի ուսուցչի համբաւ ունէր։ Շատ էր կարդացել, շատ գիտէր, ինչպէս ասում են՝ բոլորին ջրի հետ ջուրը կը տանէր կը բերէր։ Գնահատում էին, այո, իսկ վարձատրութեան, հատուցման մասին ո՛չ մի խօսք։ Տասնհինգ տարվայ մէջ ուրիշները տասնհինգ անգամ աւագի պաշտօն կը ստանային։ Թեմականաւարտ խնձորի մէկը, աչքը թամամ դեռ բաց չարած, գալիս իսկոյն ուրիշների գլխին է նայում, ինչպէս որ Միքայէլեանն է։ Մարդը կուսակցական մարդ էր, շրջիկ. բերին դպրոց մտցրին, տեղաւորեցին, հացի տէր դառաւ։ Հիմա սրա արևն է խաւարում կամ պէտք է խաւարի։ Կռիւ կը լինի, առանց կռիւ բան չի լինի։ Միքայէլեանը խաթրով տեղի չի տայ։ Բայց կօմիտէն էլ առաջվայ ոյժը չունի, երբ զինւորները աջ ու ձախ շառաչեցնելով մորակները՝ պաշտպանեցնում էին այս ու այն հակառակորդին։ Միքայէլեանը իր թայֆան կունենայ, սա իր։ Եւ արդէն ունի։ Մեծերից երկուսը անցել են սրա կողմը ու երեքով միասին վարդապետի բերանն են մտնում։

—Գիտես ինչ մարդիկ. մէկը մեր «աղօթած էշ» Վահանը, միւսը ջրատ բերան Սողոմոնեանը։ Կիրակի օրը ձէն ծպտուն հանել չէին կարողանում. հիմա թև են առել և պատրաստ են մարդու մի գդալ ջրի մէջ խեղդել։

—Լաւ, ինչու,—հարցրեց կինը,—որը դեռ չէր կարողանում ըմբռնել թէ ինչ կապ ունի ամուսնու յուզվելու հետ դպրոցական կեանքի այդ պատկերը։ Թայֆաների են բաժանվել—թող բաժանվեն. վարդապետի հետ բարեկամանում են—թող բարեկամանան. Կիրակօսին չեն ուզում աւագ ուսուցիչ, Մարկոսին են ուզում—թող Մարկոսը լինի… Ամեն մարդ իր գործի տէրն է։

—Հասկացիր, հոգիս, որ ես չեմ կարող հիռու, ձեռնպահ մնալ, չեզոք։ Պէտք է բռնել նրա կողմը, որը վերջում կը յաղթի,—այդ է պահանջում ինձանից իմ, ստորադաս ուսուցչիս, դրութիւնը։ Օրեկան տասնհինգ ժամ աշխատելով տասնհինգ տարի է ծառայում եմ… երբեք չեմ ստորացել, կեղծել, խարդախել, խաբել, քծնել, սողացել… Իսկ այժմ, այժմ… Չէ, չէ, չեմ կարող չեզոք, ձեռնպահ մնալ։

Վերջին խօսքերը մի յուսահատական ճիչ էին։

Մախաթեանը լռեց մի րօպէ։ Յետոյ մօտեցաւ լուսամուտին, գլուխը դուրս հանեց դէպի բակ։ Այնտեղ մաքուր, աշխոյժ կեանքն եռ է գալիս։ Ծիծաղ, ուրախ բացականչութիւններ, աղմուկ, իրարանցում. երեխաները աչքակապուկ են խաղում։ Նրանք անհոգ են, զուարթ, եռանդոտ։

—Երանի՜ ձեզ,—ասաց Մախաթեանը և շուռ եկաւ դէպի կինը։—Չը գիտեն դեռ՝ ինչ է կեանքը։—Եւ նա խոր հոգոց հանեց։—Մտածում եմ՝ թողնեմ իրար գլուխ կրթեն, ինչպէս ուզում են խառնեն—խռովեն, չէ լինում։ Դու տանը նստած՝ քո գործին ես, կարում, լւանում, ճաշ ես պատրաստում… Արի իմացիր, թէ ռօթ-կօտը, սալոնն ու միւսը ինչ է տուն գալիս։ Մեր մէջ ու արևնից ենք ծախսում. մեր կեանքի գնով հաց ապրում. կեանք ենք տալիս, որ մի օր աւելի ապրենք ապականված, խարդախված, եղծված այս մթնոլորտի մէջ։ Նեղ ու մութ դասարաններ, ձմեռը՝ ցուրտ, կիզատ, հոտած. երեխաներ իրար վրա թափած… Աշխատանք չէ, կրակ, Բաբելոն։ Յետոյ՝ ինչ—մէկ-մէկու միս կրծող, արիւն ծծող, ոխերիմ թշնամիներ. վայ է՝ թէ ռեխդ ընկերիդ, աւագին, հոգաբարձուներին, նախագահին կամ թէ աշակերտի ծնողին դուր չեկաւ։ Վայ է՝ թէ մի սխալ արեցիր, իսկոյն խօսք-խաբարը գնաց, տեղ հասաւ. լրտեսի նման կանգնած են միմեանց վրա. լրտեսում են բոլորը, հոգիդ, աչքերդ, շարժումդ։ Սա խոմ ծառայութիւն, գործի համար աշխատել չէ. սա լրտեսութեան, բանսարկութեան, բամբասանքի մի աղտոտ ճահիճ է։ Մէկին գլորել,—միւսին նրա տեղը դնել։ Աբրահամեանին քշեցին, Միքայէլեանին նստացրին, այժմ սրա տակն են փորում, որովհետև նրա տեղի վրա աչք ունեն։ Մի ինչ որ խաչագող համալսարանաւարտ, որին յաջորդը իր հետն է բերել։ Բոլորը մի շահ ունեն, մի խնդիր—ռոճիկ ստանալ. իսկ գործի վրա՝ թքել են վաղուց. գործից թէ հասկանում են. դպրոցը անգլխանայ է գալիս. թէ առաջ բան-ման շինում էին՝ հիմա դրանից էլ ձեռք են վերցրել։

—Դու մի խառնվիր, [illegible] գնայ։

Մախաթեանը տարաժամօրէն շարժեց գլուխը, դառն ժպտաց ու մօտենալով կնոջը, ձեռքը նրա ուսին դրեց։

—Կնիկ, չեն թողնում իմ կամքին. զոռով է թէ խաթրով՝ պէտք է ճահիճը մտնես։ Խանգարում են, շինածս քանդում։ Գալիս են և հոգուս նստում, որ ես էլ մասնակցեմ։ Միմեանց աղտն աղում են, սրա վատն ասում, միւսի հօր ոսկորները աղաղակ անում, և դու ստիպված ես գլուխ վեր բերել և «հրամանք է» ասել։ Աւագին հայհոյում են—պէտք է ասես՝ այո, ճիշտ է. միւսին են քարկոծում—էլի՝ այո, ճիշտ է։ Գալիս են ասում թէ եղբայրդ աւագ է, մայրդ պոռնիկ, ինքդ դու՝ ընկնաւոր, և պէտք է ասես՝ այո, ճիշտ է։

—Չէ, սա սոսկալի դրութիւն է. ես տանջվում եմ, հանգստութիւնս կորել է, քունս խանգարվել, երազումս էլ նրանց եմ տեսնում. Թո՜…

Երբ նա խօսում էր, կինը հետաքրքրութեամբ դիտում էր նրան. այնքան փոփոխութիւն կար նրա դէմքի, աչքերի, շարժմունքի մէջ. նրա գոյնը թռած էր, հայեացքը՝ չար, իսկ շրթները դողդողում էին անընդհատ։ Առաջներում էլ նա յուզվում էր, դժգոհում, բայց երբեք այսպէս չէր եղած. կարելի էր ասել, որ տասնհինգ տարի խաղաղ և անդորր ծառայելուց յետոյ, այսօր առաջին անգամ Մախաթեանը դէմ յանդիման էր կանգնում մի ինչ որ դժնդակ, չար առեղծուածի, որը, ուզեց-չուզեց, խանգարում էր նրա հոգու խաղաղութիւնը, տակն ու վրա անում ամեն կարգ ու կանոն…

Կրկին ձեռնպահ մնալու խորհուրդ տուեց կինը։

—Օհ՜յ, մի խառնվիր… լաւ է, ինչու չէ. թէ՞ դու մտածում ես, որ տասնհինգ տարի ծառայող ուսուցչին դժուար է պաշտօնից զրկել. թէ մարդ չի լինի, որ տեղս բռնի։ Արի այս վեց խմորակերների պատասխանը տուր. ջհերն ածեմ նրանց…

—Ամեն մարդ «կրակը իր բաղարջի տակն է քաշում», «ով չասաւ՝ նա կուշտ»։ Խելք ու նես—տեղումդ պինդ կանգնիր։ Հեռանալով, չը խառնվելով բան չի դառնայ։ Պէտք է կռուել, և կռուել նրանց զէնքերով,—որոգայթ լարել, բանսարկութիւն, քսութիւն, բամբասանք—կարճեմ որ ձեռքից կը գայ. մեծ խելք չէ հարկաւոր կեղտոտ, անազնիւ գործերի համար. մարդ լինելն է դժուար։

—Հալա կը տեսնենք, կոպիտ շեշտով վերջացրեց Մախաթեանը և ժամանակ չը տալով կնոջը պատասխանելու, ծածկեց գլխարկը և դուրս գնաց։

—

—Պ. Մախաթեան, հիմա խոմ կը համոզվէք, որ ձեր Միքայէլեանը ոչ թէ աւագ ուսուցիչ լինելու արժան չէ, այլ նրան դպրոցի պահապանի պաշտօն նոյն իսկ չը պէտք է տալ։

Նոնիկեանը—համալսարանաւարտ նորեկը—և Մախաթեանը մենակ էին ընդունարանում։

«Ի՞նչ, ինչ նպատակով է այդպէս խօսում»,—անցաւ Մախաթեանի մտքով։

Յետոյ նա ասաց.

—Նախ՝ ինչու իմ Միքայէլեանը։ Ի՞նչ տարօրինակ բան։ Յետոյ՝ ինչո՞վ պէտք է համոզվեմ, որ նա աւագութեան արժան չէ…

Նա նայում էր Նոնիկեանի ինքնահաւան դէմքին և մտածում.—ո՛վ է տանում սուտը։ Իսկապէս Նոնիկեանը աւագի դէմ մի բան գտել է, մի փաստ, թէ՞ իրան է փորձում. թէ աւագի կողմն անցնես, պաշտպանես նրան—ո՛վ գիտէ, նրա հետ միասին դու էլ գլորվես։ Լաւ կը լինի հէնց այժմեանից Նոնիկեանի կողմը բռնել ու ապագան ապահովել. սատանան է խաբար. նոր եկող արևը մանողից միշտ զօրաւոր է լինում։

Եւ թէև նա գիտէր, որ աւագին չէր կարելի մի այնպիսի բանի մէջ մեղադրել, որ նա վարկաբեկէր թէ կօմիտէի և թէ ժողովրդի աչքում, իսկ եթէ աւելին թէ նա տգէտ է, մանկավարժացու չէ—դրան գին դնող չէր լինի,—բայց պէտք էր այնպէս ձևացնել, որ եթէ ինքը, Մախաթեանը, չեզոք չէ, յամենայն դէպս աւագի բարեկամն էլ չէ։

—Ինչու չը պէտք է համոզվէք. մի կողմ թողած, որ վերջին կօշկակարը նրանից շատ է հասկանում դասատուութեան մէջ, նա կաշառքներ է վերցնում աշակերտների ծնողներից…

Մախաթեանը խոնարհեց հայեացքը և երկդիմի ժպտաց։ Այդ ժպիտը պէտք է հասկացնէր, որ Մախաթեանը համակրում է Նոնիկեանի հետ, որ նա առաջուց էլ գիտէր աւագի կաշառակերութեան մասին, որ—և այս ամենագլխաւորն է—ինքը հաւանում է Նոնիկեանի վարմունքը աւագի վերաբերմամբ։ Ժպտում էր և մտածում։

—Աստուած իմ, որքան ստորութիւն իմ կողմից…

Իսկ Նոնիկեանը փաստեր էր բերում։ Աւագը աշակերտներին ծեծում է, հայհոյում. նրա դասերի մէջ մեթոդ չը կայ, [illegible] է, թոյլկութիւն, հարուստների երեխաներն որքան էլ որ վատ են սովորում, նրա սիրելիներն են, որովհետև նրանց տներում լինում է ճաշի, ընթրիքի, հարսանիքի, մկրտութեան։ Երբեքից պակաս թւանշան չէ դնում, իսկ տարվայ վերջը բոլորին էլ փոխում է բարձր դասարան։ Կարապետեանից ստացել է տասն րուբլի, Վարդանեանից հինգ, Բարսեղ աղայից—հագուստեղէնի կտորը առանց փողի է վերցրել. և դրանց որդիները առաջին աշակերտներն են. ինչու է հալածում Մանուկեանին. նա միշտ անկիւնում կանգնած է լինում և քառորդներին միշտ վատ թւանշան ստանում. չար է, բայց լաւ է սովորում։ Հօրը կանչել է մի բան պոկելու մտքով, չէ աջողվել։ Հայրն ասում է թէ՝ «ինձ ասաց, գոնէ զատկական գառն ուղարկիր»։ Նա էլ այնպէս մարդ չէ…

Նոնիկեանը շարունակում էր մատ մատի ետևից ծալելով թւել յանցանքները, իսկ Մախաթեանի ժպիտը կամաց-կամաց ապշութեան նշանի էր փոխվում. թէ՝ նա զարմացած է և բոլորովին չէր սպասում այդպիսի մանրամասնութիւններ լսել…

—Հ՛ը, ինչ կասէք, հիմա խոմ համոզվեցիք արդէն,—վերջացրեց Նոնիկեանը, խորամանկօրէն ժպտալով Մախաթեանի երեսին։

Սա ուսերը թափ տուեց։

—Ուղիղն ասած… գիտէք, ես առաջին անգամն եմ լսում այդ բաները…

—Առաջին անգամ… հեգնեց Նոնիկեանը։—Բայց տեսէք, որ ես այդ մարդուն հէնց սկզբից լաւ աչքով չը նայեցի, և այդպէս էլ դուրս եկաւ։

—Ի հարկէ, ի հարկէ, մտածեց Մախաթեանը. քո շահն է պահանջում, որ վատ աչքով նայես։

—Բոլորն էլ ասում են, որ նա բարոյապէս փչացածի մէկն է և միայն կօմիտէի օգնութեամբ է, որ տեղում մնում է։

—Հա, ասենք այդ ուղիղ է, որ նա կօմիտէի թիկունքում է… Ու յետոյ, ես էլ նրան լաւ մարդու տեղ չեմ դրել և միշտ կասկածել եմ…

—Դուք կասկածել էք, ուրիշները հաստատ գիտեն. գնացէք Սողոմոնեանի մօտ, պակասը նա կը լրացնէ։ Այս բոլորը նա է ինձ պատմել և եթէ փաստեր պահանջեն, նա կը ներկայացնէ։

Է՛, մտածեց Մախաթեանը. սրանք իրանց բանը տեսել են, փոսը փորել, հիմա մնում է աւագին այնտեղ գլորել և հողը վրան տալ. օհ՜յ, մի բանն էլ իմ ձեռքս են տալիս…

(Կը շարունակվի)

Ս. Ա. Մուրոմցևը՝ Փրակցիայից՝ տելեֆոնով պատուիրեց պատճէնը իր համար:

Քննութեան հետ ծանօթանալու համար ամբողջ գործը պահվում է դատարանում մինչև մայիսի 15-ը: Գործի քննութիւնը տեղի է ունենալու սեպտեմբեր ամսում, եթէ միայն մի որև է պատահական բան արգելք չը լինի:

Սեպելնիկով պատգամաւորը, որին դատարանը որոնում է, հեռագիր է ուղարկել, յայտնելով, որ նա գործի օրը ներկայ կը լինի:

Ինչպէս երևում է գործի քննութիւնից, կոմս Հէյդէնը յայտնել է, որ նա Վիբորգի կոչը դեռ Վիբորգում, պատգամաւորների նիստում, «անմիտ» մի ակտ է անուանել:

Տուն գնացող պատգամաւորները հարցնում էին Նաբոկովին. «Իսկ քննիչին չէ՞ն կարող մեղադրել վիբորգեան կոչը տարածելու համար: Չէ՞ որ մեզ տուած ամեն մի պատճէնի մէջ լինելու է և վիբորգեան կոչը»:

Այդ նկատողութիւնը, որ բաւականին հիմնաւոր էր, ընդհանուր ծիծաղ պատճառեց:

(«Русь»)

ՄԱՄՈՒԼ

Հելսինգֆորսում մայիսի 9-ին բացվել է ֆինլանդական սէյմը ընտրողական ընդհանուր իրաւունքի հիման վրա, կանանց մասնակցութեամբ: Ընտրողական նոր սիստեմի շնորհիւ ներկայ նորընտիր սէյմը բաւականին դեմօկրատական կազմ ունի. Նրա մէջ միևնոյն ժամանակ մտնում են և կին պատգամաւորներ, որ, ի հարկէ, մի բառաւիկ երևոյթ է: Այդպիսով այսուհետև Ֆինլանդիայի ժողովրդական ներկայացուցիչների առաջ բացվում է գործունէութեան լայն ասպարէզ յօգուտ ժողովրդի բարօրութեան, բացվում է ազատ ճանապարհ սօցիալական օրէնսդրութիւնների համար: Այդ տեսակէտից՝ վերին աստիճանի հետաքրքրական պէտք է լինեն նրա նիստերը, և, թերևս, նա իր պարլամենտական գործունէութեամբ խրատական շատ օրինակներ կարող է տալ մեզ:

Ֆինլանդիան,—ասում է «Р. В.» լրագիրը,—վերջին տարիներս նոյնպէս յեղափոխութեան մէջ էր, նրա քաղաքական հաստատութիւնները վերանորոգվեցին ամենաարմատական կերպով, բայց այդ յեղաշրջումը կատարվեց համեմատաբար առանց ծանր երկունքների, առաջ չը բերեց այն արիւնահեղ ցնցումները, որոնց մենք ականատես եղանք Ռուսաստանում: Ֆինլանդական պատմութիւնը աւելորդ անգամ ցոյց տուեց ներկայացուցչական հաստատութիւնների կրթական դերը: Մեզ՝ ռուսներիս համար, ֆինլանդական դէպքերը առանձնապէս խրատական են: Համեմատելով նրանց ռուսաց անցքերի հետ, մենք տեսնում ենք երկու բոլորովին տարբեր վերաբերմունք կառավարութեան կողմից դէպի ազգաբնակութեան առաջադրած պահանջները և այդպիսի յարաբերութիւնների տարբերութիւնից առաջացած հետևանքները: Ֆինլանդիայում կառավարութիւնը քաջութիւն ունեցաւ գնալ աւելի հեռուն և արձագանք տալ երկրի ցանկութիւններին: Ֆինլանդիայում տրված է իսկական դեմօկրատական սահմանադրութիւն, նրան չեն կառավարում բացառիկ դրութիւնների հիման վրա, և այդ բաւական էր ազգաբնակութիւնը հանգստացնելու համար: Մի ժողովուրդ, որ իր շահերը պաշտպանելու համար վայելում է կուռ սահմանադրական եղանակներ, հեռու է մնում որևէ էկցեսներից: Ռուսաստանում սահմանադրութիւնը ընթանում է արտակարգ պահպանութեան և զինուորա-դաշտային դատարանների հետ միասին, և դրա հետևանքը այն է, որ ազգաբնակութիւնն էլ կանգնած չէ սահմանադրական հաստատուն ճանապարհի վրա:

Դուման սկսելով իր օրէնսդրական աշխատանքները ներկայումս աւելի քան երբևիցէ կարօտ է ժողովրդի աջակցութեան: «Товарищъ» լրագիրը խօսելով այդ մասին աշխատում է պարզել Դումայի դրութիւնը մերձաւոր ապագայում:

Բոլոր կուսակցութիւնները,—ասում է լրագիրը,—բացի ի հարկէ, նրանցից, որոնք բացառաբար են վերաբերվում սահմանադրականութեան բուն սկզբունքներին և ձգտում են ինչ էլ որ լինի Դուման պայթեցնել, պատրաստ են տակտիկական լուրջ զիջումներ անելու, միայն թէ մի որ և է կարելի ելք գտնեն այն դրութիւնից, որը նախապատրաստում է նոր հող բռնկումների և նրա հետ կապ ունեցող բոլոր երևոյթների համար: Սօցիալ-դեմօկրատներն ու սօց.-յեղափոխականները աշխատում են Դումայի մասնաժողովներում իբրև կատաղի պարլամենտականներ: Աշխատաւորականները չեն ուզում ձայն տալ նորակոչ զինուորների օրինագծի օգտին: Վրդովեցուցիչ փաստերի մասին արված հարցապնդումների մեծամասնութիւնը արևմտեան-եւրոպական պալատում դառնում է սովորական հանդիսատ և կշռադատված լեզուով: Այդ բոլորը չէ՞ վկայում, արդեօք, այն ահագին զսպված դրութեան մասին, որից դէնը Դուման, առանց իր արժանապատուութեանը վնասելու, չէ կարող գնալ: Կարճատև արձակուրդից յետոյ դարձեալ սկսվում են չարատանջ օրերը: Երկիրը կը տեսնէ նրանց: Ցամենայն դէպս Դուման պատրաստ է աշխատելու առանց ձեռքերը ծալելու: Հերթում կանգնած են մի շարք առաջնակարգ օրէնսդրական հարցեր: Ոչ մի րօպէ չէին դադարում ծայրայեղ աջակողմեանների պրօվօկացիօն փորձերը: Սկսած կռւում հասարակական լայն շրջանները ամբողջովին կը լինեն նրանց կողմը, որոնք արդարև իրաւունք ունեն ժողովրդական ներկայացուցիչներ անուանելու իրանց: Լարված ուշադրութեամբ դէպի պարլամենտի զբաղմունքի առարկաները, քննադատական, բայց և վստահելի վերաբերմունքով դէպի նրա տակտիկան, նրա ամեն մի անաջող փորձերի զսպված գնահատութեամբ երկիրը աջակցութիւն ցոյց կը տայ իր Դումային:

*

Դաշնակցութեան չորրորդ ընդհանուր ժողովի որոշումների առիթով «Երկրի Ձայն» թերթը հետևեալ խորհրդածութիւններն է անում.

Դա մի «կատարեալ աջողութիւն» է, այո, Դաշնակցութեան համար, բայց հարց է, թէ նա կազմում է արդեօք մի «կատարեալ» աջողութիւն և այն ժողովրդի համար, որի բաղդը բռնել է Դաշնակցութիւնը իր ձեռքերում:

Ինչ ասել կուզէ, որ մենք ցանկանում ենք տեսնել սահմանի այս, ինչպէս այն կողմի գործունէութիւնը միանգամայն անջատուած: Որովհետև նախ երկու դաշտերը նոյն բնաւորութիւնը չունեն, և Դաշնակցութիւնն ստիպված է ծառայել «երկու տիրանց» և հետևաբար ոչ մէկին ցանկալի հաւատարմութեամբ ու անհրաժեշտ եռանդով, երկրորդ, ու մանաւանդ, վճռական ճշմարտութիւն է այն, թէ որևէ երկրի յեղափոխութիւնը պէտք է ծնէ նոյն երկրում և ղեկավարվի նոյն երկրի ուղեղով ու նոյն երկրի յարափոփոխ հանգամանքների համաձայն. հակառակ դէպքում, ինչպէս առաջ, նոյնպէս այժմ, մենք ցաւով հանդիսատես կը լինէինք այն անհեթեթ երևոյթին, որ մի պատերազմ կը մղէր հեռուն նստած զօրապետներով:

Թիւրքահայ ժողովրդի էական, անդառաճան շահը պահանջում է, որ այլևս վերջ դրվի այն գայթակղալից «խնամակալութեան», որ հաստատել է նրա վրայ, որ արտասահմանը ոչ մի ձայն չունենայ երկրի գործերի ղեկավարութեան մէջ, իրաւունքի ոչ մի մասնիկ չիւրացնէ այդ գործերում միջամտելու: Նրանք, որոնք ցանկանում են տէր դառնալ այդ ձայնին ու այդ իրաւունքին, պէտք է որ մտնեն երկիր և այն էլ ոչ թէ մի քանի տարւայ ու մի քանի ամսւայ համար:

Ապա առաջ բերելով Ժընևից «Փայլակին» ուղարկված հեռագիրը, որտեղ ասված է, որ «Դաշնակցութիւնը շարունակելու է գործունէութիւնը Թիւրքիայում յանուն ժողովրդի ազատագրութեան», աւելացնում է.

«Շարունակելու է»: Ի՞նչպէս. այսինքն առաջվայ նման խմբեր անցկացնելով, մասնակի ցոյցեր ու առանձին շարժումներ կատարելով: Եւ յետոյ՝ «ժողովրդի». որ ժողովրդի, միայն հա՞յ, թէ առհասարակ բոլոր ժողովուրդների, ազգային առանձին պահանջներով, թէ՞ ընդհանուր լօզունգով կամ ռէժիմի դէմ:

Թերթը կանխում է հարցերը իրար ետևից շարել և իր ենթադրութիւնները անել, հիմնվելով լոկ հեռագրի վրա, մինչդեռ պէտք է համբերութիւն ունենալ սպասելու մանրամասնութիւնների:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Մայիսի 5-ին Թիֆլիսի դատաստանական պալատի նիստում նշանակված էր «Баку» լրագրի նախկին խմբագիր Գ. Կարա-Մուրզայի գործի քննութիւնը:

Ինչպէս յայտնի է, Բագուի նահանգական դատարանի դատախազը պատասխանատուութեան էր ենթարկել նրան երկու գործի համար, այն է՝ որ նա արտատպել էր իր խմբագրութեամբ հրատարակվող 1) «Баку» լրագրում, առանձին վերնագրով «Русь»-ից մի նկատողութիւն Վիլենի դատաստանական պալատում տեղի ունեցած քննութեան հաշւետւութիւնից և 2) մայրաքաղաքի լրագիրներից քաղել էր սօցիալիստ-յեղափոխական կոմիտեի անունից հրատարակված յայտարարութիւնը, որ ընդհանուր զինված ապստամբութեան մասին տարածված լուրերը սխալ են, և տեղի կունենան միայն մասնակի բռնկումներ:

Ահա այս վերջին արտատպութիւնը առիթ է ծառայել մեղադրելու պ. Կարա-Մուրզային սուտ և խռովայոյզ լուրեր տարածելու մէջ:

Բագուի նահանգական դատարանը, քննելով այդ երկու գործը, առաջին մեղադրանքի համար պ. Կարա-Մուրզային դատապարտեց 3 օրվայ բանտարկութեան կամ 10 րուբլի տուգանքի:

Իսկ երկրորդը՝ անհետևանք թողեց:

Դատախազը դժգոհ մնաց և բողոքեց դատաստանական պալատին: Եւ վերջինս գործը քննեց մայիսի 5-ին:

Նախագահում էր Չեխովսկին, անդամներն էին Իօնին և Ուտնեւով:

Մեղադրում էր դատախազ Մասկալով, պաշտպանում էր երդուեալ-հաւատարմատար Ի. Դոլուխանեանը:

Դատախազը իր մեղադրական ճառում առաջին գործի մասին ասաց, որ Բագուի նահանգ. դատարանը չափազանց զիջող է վերաբերվել՝ արդարացնելով Կարա-Մուրզային այն արտատպութեան համար, որով անուանարկվում է Վիլենի դատաստանական պալատը. դրանով նա կրկնում է վիրաւորանքը:

Բայց նա միևնոյն ժամանակ համաձայն չէ և Բագուի դատարանի դատախազի հետ, որի առաջարկած պատիժը՝ 3—8 ամիս բանտարկութիւնը՝ համարում է շատ խիստ: Ուստի բաւական է համարում մեղադրվողին ենթարկել 2 շաբաթ բանտարկութեան և 100 րուբլի տուգանքի: Ինչ վերաբերում է երկրորդ գործին՝ նա համաձայն է ո՛չ թէ դատախազի հետ, այլ նահանգական դատարանի հետ, որը արդար է ճանաչել պ. Կարա-Մուրզային: Մեղադրական այդ երկրորդ կէտը, իրաւ է, թէև խռովայոյզ ու վրդովեցուցիչ է, բայց սուտ չէ: Այդ տեսակէտից պէտք է արդար ճանաչել մեղադրվողին:

Պաշտպան Դոլուխանեանը առաջին գործի վերաբերմամբ ապացուցանում է, որ նրան պէտք է դադարեցնել, որովհետև սենատի մեկնութեամբ գանգատվողը պէտք է լինի այն հաստատութիւնը, որ իրան վիրաւորված, անուանարկված է զգում: Ուստի Բագուի նահանգ. դատ. դատախազը կարող էր դատ սկսել, եթէ այդ մասին գանգատ ստացված լինէր Վիլենի դատաստ. պալատից: Երկրորդ գործի համար պաշտպանը խնդրում էր հաստատել Բագուի նահ. դատարանի որոշումը, որովհետև այդ արտատպութեամբ նա ուզեցել է հանգստացնել յուզված մտքերը. այդ տեսակէտից նա ոչ մի յանցանք չէ պարունակում իր մէջ:

Խօսքը վերապահվում է մեղադրվող պ. Կարա-Մուրզային, որը առաջին գործի առիթով ուշադրութիւն է հրաւիրում արտատպութեան վերնագրի վրա, որ դրված է չակերտների մէջ և բացատրել է չակերտների նշանակութիւնը: Երկրորդ գործի էութիւնը նա բացատրել է նրանով, որ այդ արտատպութեամբ նա ոչ թէ սուտ ու վրդովեցուցիչ լուրեր է տարածել, այլ ընդհակառակը հանգստացնելու նպատակ է ունեցել:

Դատաստանական պալատը, լսելով կողմերին և քննելով գործը, որոշել է դադարեցնել առաջին գործը և երկրորդ գործի մասին հաստատել Բագուի նահանգական դատարանի կայացրած վճիռը:

Այդպիսով երկու գործում էլ պ. Կարա-Մուրզան ճանաչված է արդար:

L.

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մայիսի 4-ի նիստում տեղի ունեցած սկանդալից յետոյ, որի հեղինակներն էին Պուրիշկևիչն ու իր երկու ընկերը, ինչպէս ասում են, ցոյց տալու համար, որ դէպի Գոլովինը առաջվայ նման դարձեալ լաւ են տրամադրված, մօտ ժամանակներս մեծամասնութիւն կայ նորից ունկնդրութիւն շնորհել:

Մինիստրների խորհրդի մէջ քննվել է այդ միջադէպը. վճռված է ոչ մի ուշադրութիւն չը դարձնել այդ սկանդալի վրա: Ի միջի այլոց պարզվել է, որ մինիստրները դժկամակութեամբ և բացառաբար են վերաբերվում դէպի Պուրիշկէվիչը:

Ստոլիպինը ի միջի այլոց այն կարծիքն է յայտնել, որ, եթէ աջակողմեանները ուզենան պատգամաւորութիւն ուղարկել Ցարսկոյէ-Սելօ բողոքելու Գոլովինի դէմ, ինքը ամեն կերպ կաշխատէ արգելք լինել, որպէսզի նրանց ունկնդրութիւն չը տրվի: («Парусъ»)

—Ժողովրդական ազատութեան կուսակցութեան Փրակցիայի կից Կուտլերի նախագահութեամբ մօտ օրերս կայացել է ագրարական մասնաժողովի նիստը: Փրակցիան եկել է այն վերջնական եզրակացութեան, որ 87-րդ յօդուածի կարգով հրատարակված օրինագծերը անհրաժեշտ է, որ Դուման փոխէ հէնց այժմից:

—Սօց.-յեղափոխական և սօց.-դեմօկրատ պատգամաւորները վերջապէս յանգել են այն մտքին, որ անհրաժեշտ է ագրարական հարցի մասին վիճաբանութիւնները կրճատել: Նրանք մտադիր են մօտ օրերս հարց բարձրացնել այդ մասին: Անշուշտ այդ առաջարկը կընդունվի բոլոր օպպօզիցիօն կուսակցութիւնների կողմից:

—Ժողովրդական ազատութեան կուսակցութեան պարլամենտական Փրակցիան առաջարկել է Պետական Դումայի ընտրութիւնների վերաբերեալ հիմնական օրէնքների մի նախագիծ: Դրա հիման վրա ընտրողական իրաւունք են ստանալու ռուսաց պետութեան այն բոլոր քաղաքացիները, որոնք ընտրութիւնների ուկազը հրատարակելու ժամանակից սկսած 21 տարեկան հասակ ունեն,—առանց սեռի, ազգութեան: Ընտրութիւնները կատարվում են ուղղակի և գաղտնի ձայնատուութեամբ: Ընտրութիւններին մասնակցելու իրաւունք չունեն այն անձինք, որոնք գտնվում են խնամակալութեան և հոգաբարձութեան տակ, կամ դատարանի դատավճռով զրկված են իրաւունքներից. նոյնպէս և այն անձինք, որոնք զինուորական ծառայութեան մէջ են կամ վարում են գեներալ-նահանգապետի, նահանգապետի, քաղաքապետի, ոստիկանական և գաւառապետների պաշտօնները Լեհաստանում: Պետական Դումայի անդամութեան համար թեկնածուները պէտք է առաջարկված լինեն ոչ պակաս քան 20 ընտրողների կողմից: Ընտրված համարվում են այն թեկնածուները, որոնք ստանում են բոլոր ձայների կէսից աւելին: Եթէ ձայները պառակտվում են, այն ժամանակ պէտք է վերընտրութիւն նշանակել: Դրանից յետոյ ընտրված է համարվում այն թեկնածուն, որը համեմատաբար ամենից աւելի է ձայների մեծամասնութիւն ստանում:

ՄԻԵՒՆՈՅՆ ՓՈՍԻ ՄԷՋ

Երևի կը յիշեն ընթերցողները մեր այն ընդարձակ յօդուածը, «Պատմական փաստեր ու բացատրութիւններ» վերնագրով, որ անցեալ տարի տպագրվեց «Մշակում», և որի մէջ զուգահեռական կարգով հետևելով Հնչակեան կուսակցութեան և Հ. Յ. Դաշնակցութեան երկարամեայ գործունէութեանը ցոյց էինք տուել, թէ ինչպէս Դաշնակցութիւնը, կամայ թէ ակամայ, միևնոյն պայմաններից ու հանգամանքներից դրդված, տարիների ընթացքում շարունակ հետևել ու ընթացել է նոյն ճանապարհով, ինչ ճանապարհով որ գնացել էր իր նախորդը՝ Հնչակեան կուսակցութիւնը: Այդ ժամանակ Դաշնակցութեան ընդհանուր ժողովի մասին դեռ խօսք չը կար, բայց և այնպէս, ի նկատի առնելով այն գաղափարական յեղաշրջումներն ու ճիւղաւորումները, որ այդ ժամանակ արդէն առաջ էին եկել Դաշնակցութեան շարքերի մէջ, շնորհիւ զանազան պատմական հանգամանքների, որոնց մասին այն ժամանակ մենք երկար խօսել էինք, ուստի և աւելորդ է այժմ նրանց կրկնելը, մենք այն կարծիքն էինք յայտնել, որ եթէ Դաշնակցութեան ընդհանուր ժողով տեղի ունենայ, հաւանականաբար նա էլ նոյն եզրակացութեանը կը գայ և նոյն հետևանքները կունենայ, ինչ ունեցել էր Հնչակեան կուսակցութեան համագումար ժողովը:

Այժմ կարող ենք ասել, որ մենք բոլորովին սխալված չէինք: Դաշնակցութեան համագումարը վերջացել է և, ինչպէս «Փայլակում» տպագրված հեռագրից իմացանք, այնտեղ էլ մօտաւորապէս նոյն ռեզօլիւցիան է անցել, ինչ ռեզօլիւցիա անցել էր հնչակեանների վերջին համագումարում 1905 թւականին: Այդ ռեզօլիւցիայի բովանդակութիւնը հետևեալն է. «Անջատման առաջարկը յետ է մղված. Դաշնակցութիւնը շարունակելու է գործունէութիւնը Թիւրքիայում յանուն ժողովրդի ազատագրութեան և Կովկասում, ղեկավարվելով սօցիալիստական աշխատաւորական սկզբունքով և յեղափոխական տակտիկով: Նշված է համերաշխութիւն օտարազգի յեղափոխականների հետ և ֆէդերացիա ազգային հարցի վերաբերմամբ»: Եթէ մենք մի կողմ նետենք այս ռեզօլիւցիայից վերջին՝ «և ֆէդերացիա ազգային հարցի վերաբերմամբ» խօսքերը, կը ստանանք ճիշտ և ճիշտ հնչակեանների համագումարում անցած ռեզօլիւցիան:

Թէև «Դրօշակի» խմբագրութիւնը համագումարի որոշումները հեռագրելով «Փայլակին» իր կողմից մի առանձին բերկրութիւն է արտայայտում, ասելով թէ համագումարը վերջացաւ կատարեալ աջողութեամբ ու համաձայնութեամբ, թէև նոյն ուրախութիւնն է զգում և «Փայլակի» խմբագրութիւնը, բայց, առանց մարգարէ լինելու, կարելի է ամենայն վստահութեամբ ասել, որ այդ ընդունած ռեզօլիւցիայով համագումարը ամենավատ խորխորատների մէջ է գցել Դաշնակցութիւնը և նրան բնական մահվան է դատապարտել:

Ինչպէս պարզ երևում է, Դաշնակցութեան համագումարին էլ ամենից աւելի այն միտքն է զբաղեցրել, ինչ որ զբաղեցնում էր Հնչակեան համագումարին, այն է՝ ամեն կերպ աշխատել, որ կուսակցութեան ամբողջութիւնը պահպանվի և նրա մէջ անջատումներ տեղի չունենան: Բայց դժբաղդութիւնը հէնց նրանումն է, որ ընդունված որոշումները, դրանց շնորհով կուսակցութիւնը երկուորեակ դրութեան մէջ դնելն է, որ ամենից շատ նպաստում են կուսակցութեան քայքայմանն ու նրա մէջ անջատումներ առաջանալուն: Թէև այս միտքն այն աստիճան պարզ է, որ բացատրութիւնների ոչ մի կարիք չունի, բայց և այնպէս, քանի որ մեր մէջ դեռ ևս շատ մեծ է այնպիսի մարդկանց թիւը, որոնք չափազանց մեծ նշանակութիւն են տալիս թղթի վրա գրված որոշումներին և կարծում են, թէ աշխարհը հէնց այդպիսի նախամտածված որոշումներով է դառնում արեգակի շուրջը, ուստի և աւելորդ չենք համարում մի քանի խօսք ասել այդ «անջատման» խնդրի մասին:

Արդ՝ այդ ի՞նչ «անջատման» հարց էր, որ այնչափ սարսափեցնում էր թէ հնչակեան և թէ դաշնակցական համագումարներին, և որը «յետ մղվեց» այդ երկուսի կողմից էլ: Արդեօք դա չարամիտ մարդկանց չար դիտաւորութիւնների արդիւնք էր, թէ՞ բնականորէն փոփոխված ու զարգացած նոր պայմաններից ու հանգամանքներից բնական կերպով առաջացած մի անհրաժեշտութիւն: Ինչպէ՞ս էր դրված «անջատման» հարցը և ի՞նչ էին ասում նրա կողմնակիցները: Ահա թէ ինչ:

Մինչև օրս Տաճկաստանում եղած յեղափոխական շարժումները միշտ դրված են եղել զուտ ազգային հողի վրա. «հայկական հարցով», լինի դա «ազատ ու անկախ Հայաստան» ձեռք բերելու հարց, թէ միմիայն 6 հայկական նահանգներում րեֆօրմներ ձեռք բերելու հարց, դա միևնոյն է, շահագրգռված է ամբողջ հայ ազգը, առանց դասակարգերի խտրութեան. ուստի և նրան աջող լուծում տալու համար թէ Հնչակեան կուսակցութիւնը և թէ Դաշնակցութիւնը, հակառակ իրանց սօցիալիստական տենդենցներին ու բարբաջանքներին, միշտ աշխատել են ու պիտի ապագայում էլ աշխատել ամեն մի հայի աջակցութիւնը խնդրել, լինի նա հարուստ բուրժուա, թէ ինչազուրկ պրօլետար, վաշխառու թէ տիրացու: Սակայն 2—3 տարուց ի վեր այդ երկու կազմակերպութիւնների առաջ էլ ծառայել է «կովկասեան գործունէութիւնը», որտեղ, շնորհիւ բոլորովին այլ պայմանների ու հանգամանքների, անհնարին է և մինչև իսկ խիստ վնասակար ազգային հողի վրա գործելը: Այստեղի քաղաքական կռիւը լինելով զուտ դասակարգային, անհրաժեշտօրէն, այստեղի հայ ժողովուրդն էլ շերտաւորութիւնների ու դիֆերենցիացիայի է ենթարկվում: Շատ բնական է, որ այդ շերտաւորումը տեղի է ունենում և նախկին ազգային կուսակցութիւնների մէջ, և նրանց անդամներից ամեն մէկը յարում է իր դասակարգային դիրքին ու համոզումներին համապատասխանող կուսակցութեանը:

Արդ, մեր նախկին ազգային կուսակցութիւնները, կամենալով շարունակել իրանց գործունէութիւնը Տաճկաստանում և միևնոյն ժամանակ ցանկանալով գործունէութիւն ունենալ և Կովկասում, անպատճառ վնասած կը լինեն միայն թէ «հայկական դատին» և թէ կովկասեան միջազգային քաղաքական ու դասակարգային պայքարին:

Նրանք վնասած կը լինեն «Հայկական դատին» այն տեսակէտով, որ՝ Կովկասում միմիայն «աշխատաւոր մասսաների» շահերը պաշտպանող ու բուրժուազիայի դէմ մաքառող Դաշնակցութիւնից հեռացած ու նրան այլ ևս թշնամաբար վերաբերվող հայ բուրժուաները և ոչ «աշխատաւոր» տարրերը ոչ մի համակրութիւն ու աջակցութիւն չեն կարող ցոյց տալ այդ կուսակցութեանն ու նրա միջոցով Տաճկաստանում մղվող շարժումներին: Բայց, խոստովանեցէք, որ բուրժուաների աջակցութիւնը չափազանց կարևոր է «հայկական դատի» համար, որպէսզի յեղափոխական կուսակցութիւնները բարոյական իրաւունք ունենան նրանց արհամարհելու: Մի երկիր, որի մէջ ապրող հայ ժողովուրդը վերջին ծայր աղքատութեան մէջ է գտնվում, ուր չը կայ սեփական բուրժուազիա, և որը սկզբից ի վեր Կովկասում ապրող «հարուստ եղբայրների» աջակցութեան յոյսերովն է ապրում, այդպիսի մի երկիր ու նրա մէջ ապրող ժողովուրդն, ասում ենք, երբէք չէ կարող գոհ լինել, որ այս կամ այն կուսակցութիւնը, իր «ամբողջութիւնը չը քայքայելու» սին միտումներից դրդված և իր «պրեստիժը պահպանելու» խաթրու, նրան զրկում է այդ «եղբայրների» աջակցութիւնից:

Այսպէս ուրեմն. «անջատումից» վախեցող ու այդ հարցը «յետ մղող» դաշնակցական թէ հնչակեան համագումարները, իրանց՝ մի ձեռքով երկու ձմերուկ բռնելու և միաժամանակ երկու աթոռի վրա նստելու՝ սիստեմով, հէնց իրանք են անգիտակցաբար անջատում առաջացնում այն դատի շուրջը, որի համար նրանք այնչափ սրտացաւ են ուզում երևալ:

Այդ դեռ բաւական չէ. Նրանք իրանց այդ երկդիմութեամբ ու «անջատումի» հարցը «յետ մղելով» գիտակցաբար թէ անգիտակցաբար ահագին անջատումներ են առաջացնում հէնց իրանց կազմակերպութիւնների մէջ ու սաստիկ թուլացնում նրանց թէ քանակի և թէ մանաւանդ որակի կողմից: Յայտնի է արդէն, որ Դաշնակցութեան մի շատ պատկառելի մասը, զուտ տաճկահայերից բաղկացած, որ յայտնի է մեզանում «Միհրանական» անունով, արդէն ամիսներ առաջ անջատվել էր այդ կազմակերպութիւնից, սպասելով՝ թէ ինչպէս կը վերաբերվի համագումարը «Կովկասեան նախագծին»: Քանի որ այժմ այդ «նախագիծը» ընդունված է և վաւերացված,—երկու ֆրօնտում էլ տարբեր հողի վրա և տարբեր ուղղութիւններով գործելու,—[illegible] ու քաօսը, որ առեղծել էին Դաշնակցութեան կենտրոնը կամ, ինչպէս սովորաբար անուանում են՝ ձահիճը կազմող շէֆերը, միհրանականների համար այլևս վերադարձ չէ կարող լինել դէպի Դաշնակցութիւնը, և նրանք կը մնան անջատված, ինչպէս որ անջատված են մնացել «Վերակազմեալ հնչակեանները»:

Յայտնի է նոյնպէս, որ Դաշնակցութիւնից արդէն բաժանվել է և նրա ձախ թևը, «Երիտասարդ դաշնակցականներ» անունը կրող մասը, որը, ըստ երևոյթին, շատ մօտ ապագայում պիտի միանայ էս-էրական կուսակցութեան հետ, ինչպէս որ հնչակեաններից զատված գիտակից սօցիալիստական տարրերը միացան սօց.-դեմ. կուսակցութեան հետ:

Այս բոլորը այսպէս լինելուց յետոյ, այլևս ի՞նչ է վաստակում Դաշնակցութիւնը իր համագումարում անջատման հարցը «յետ մղելով», և ի՞նչ նշանակութիւն ունի «Դրօշակի» խմբագրութեան այն բերկրանքը, թէ «ընդհանուր ժողովը վերջացաւ կատարեալ աջողութեամբ և համաձայնութեամբ»: Էլ ինչ մէջն է աջողութիւնն ու համաձայնութիւնը: Մի՞թէ նրա մէջ, որ Դաշնակցութիւնը մի անգամից զրկվել է թէ Տաճկաստանում իր համար անհրաժեշտ մարտիկ տարրերից և թէ Կովկասում ունեցած ամենագիտակից և թարմ ուժերից: Մի՞թէ նրա մէջն է աջողութիւնը, որ բաժանված այդ երկու թևերն էլ այսուհետև անխնայ մաքառում պիտի սկսեն Դաշնակցութեան դէմ, աջ թևը ջանալով դուրս վանել նրան «հայկական դատի» ասպարէզից, իսկ ձախ թևը Կովկասում «աշխատաւոր մասսաների» շրջաններից: Մի՞թէ նրա մէջն է աջողութիւնը, որ Դաշնակցութիւնը համագումարի ձեռքով վերջնականապէս նետվել է դուալիզմով շաղախված ճահիճի մէջ, որի շնորհով այսուհետև կազմակերպութեան միջից հետզհետէ դուրս պիտի փախչեն թէ անխարդախ «հայկական դատի» կողմնակիցները և թէ մանաւանդ գիտակցութեան հասած սօցիալիստական տարրերը: Եւ մնալ պիտի միայն այսուհետև «չանջատված» Դաշնակցութեան մէջ: Շատ բնական է, որ մնացողները կը լինեն ըստ մեծի մասին անգիտակից խաժամուժը, մտքերի ու հայեացքների հակասական քաօսի մէջ խարխափողները և, որ ամենից գլխաւորն է, յեղափոխական գործի հացկատակները կամ, պ. Լ. Սարգսեանի շատ բնորոշ ու աջող տերմինով՝ յեղափոխութեան Ալֆօնսները:

Խոստովանեցէք, որ բոլորովին հաճելի դրութիւն չէ առեղծել Դաշնակցութեան համար նրա չորրորդ ընդհանուր ժողովը, և «Դրօշակի» ու «Փայլակի» խմբագրութիւնները շատ են շտապել իրանց բերկրանքը արտայայտելու այդ ժողովում անցած ռեզօլիւցիայի վերաբերեալ:

Այդ ռեզօլիւցիայի միւս կէտերի մասին մենք կը վերադառնանք մի այլ անգամ: Առայժմ այսչափը միայն ասենք, որ այդ ռեզօլիւցիայով Դաշնակցութիւնն էլ նոյն փոսի մէջ է գլորվել, ինչ փոսի մէջ որ գլորվեց Հնչ. կուսակցութիւնը իր վերջին համագումարից յետոյ, 1905 թւականին:

Խ.-Ազատ

ԱՆՏԵՂԻ ԴԺԳՈՀՈՒԹԻՒՆ

Նոր-Բայազէտ, մայիսի 5-ին

«Մշակ»-ի № 35-ում գրած էի, որ մարտի 22-ին մեր քաղաքի մէշչանական հասարակութեան ընդհանուր ժողովը հարկերի բաժանումը որոշելով մի մասը հողի վրա (հողի հետ կապ ունեցող գումարը), իսկ միւս մասը՝ (ուսումնարանական և այլ գումարը) հալի վրա, յանձնել էր այդ հարկերի բաժանումը մասնաժողովին, որին ընտրել էր նոյն այդ մէշչանական ժողովը: Մասնաժողովի տրամադրութեանն էր թողնված նաև այն գումարը—500 ր., որով շինելու էին հանդերի ճանապարհները: Այդ գումարը նոյնպէս իբր հողի հետ կապ ունեցող մի ծախս՝ բաժանվեց հողատէրութիւնների վրա, որը միւս հասարակական ծախսերի և հողային-արքունական տուրքերի (оброчн. подати) հետ միասին գութանը նստեց 3 րուբլի (գութանը տեղական չափ է՝ մի փոքր աւելի $1^{1}/_{2}$ դեսեատինից):

Ձեռնարկելով ժողովի վճռի համաձայն հարկերը բաժանելու սիստեմին, մասնաժողովը նախապէս ստուգելով քաղաքի աղքատ դասը հասարակ ծախսերից (մօտ 600 ընտանիք, որոնցից 300-ը բացակայ են և ապրում են ուրիշ տեղեր), Մնացեալ քաղաքացիներին բաժանեց 11 կատեգօրիաների՝ վերցնելով առաջին կատեգօրիան սկսած չքաւոր դասակարգից, որի համար տուրք նշանակվեց 1-ական րուբլի իւրաքանչիւր ընտանիքին: Երկրորդ կատեգօրիան տուեց 2-ական րուբլի, երրորդը՝ 3 ր., չորրորդը՝ 5 ր. հինգերորդը՝ 7 ր. վեցերորդը՝ 10 ր. եօթերորդը՝ 12 ր. ութերորդը՝ 15 ր. իններորդը՝ 20 ր. տասներորդը՝ 25 ր. և տասնմէկերորդը՝ 30 ր.: Բայց թէ ինչ աստիճանի ֆինանսական դրութիւն ունի մեր քաղաքը՝ պէտք է հասկանալ նրանից, որ 1500 անից 600-ը ոչինչ չը տուեց, մօտ 5—600-ը՝ մի րուբլի տուեց, իսկ վերջին կատեգօրիան—30 ր.—տուեց միմիայն 4—5 ընտանիք: Եւ որովհետև ամեն տեղ ընդունված է, որ ուսման—կրթութեան գործի վրա դրված ծախսերը առհասարակ կրելու են հարուստ դասակարգերը, այդ հիման վրա էլ մեր քաղաքի ուսումնարանական ծախսերը բաժանվեցին աւելի շատ ունևոր դասակարգի վրա: Եւ պէտք է փակագծի մէջ ասել, որ այս տարվայ հասարակական ծախսերին, նահանգապետի առաջարկութեամբ, մասնակցեցին նաև քահանաները, որոնք միշտ ազատ էին այդպիսի ծախսերից:

Սակայն, պէտք է ասել, որ այդ արդար բաժանումից, որին շատ բարեխղճաբար վերաբերվեց մեր մասնաժողովը, անբաւական են, դժգոհ թէ ունևորը և թէ միջակ դասակարգը: Նա, որը շատ հեշտութեամբ կարող է մի 5—10 րուբլի վճարել իբր դպրոցական տուրք տարեկան, դժգոհում է թէ՝ «անխիղճ են վճռել, շատ են գրել» և այլն: Միևնոյն ժամանակ առարկողներ կան, թէ իբր «մասնաժողովի անդամները իրանց հետ չունեն—թշնամի են, դրա համար շատ են նշանակել տուրքերը» կամ թէ՝ «հոգին դուրս գայ նրա, ով երեխայ ունի կարդալու, և թող ինքը իր երեխայի ցաւը քաշի», և էլ ուրիշ պատճառաբանութիւններ: Բայց գիտենք, որ այդպիսի առարկողները շատ դէպքերում րուբլին կօպէկի տեղ են ծախսում, մինչդեռ իրանց վճարելիք մի քանի րուբլիներով կարող էին ուսում անել իրանց հարևան որբ երեխաները և չքաւոր աշակերտները: Աւելի ցաւալին է, որ դժգոհում են նոյնիսկ մեծ վաճառականները—հարուստները, որոնք գրեթէ ինտելիգենտ հաս. տիպն են կրում իրանց արտաքինի վրա և որոնք իրանց ծով ծախսերի, զեղխութիւնների և շռայլութիւնների շարքում զլանում են տարեկան 10—20 ր. ուսումնարանական տուրք վճարել, որով միջոց տրվէր դպրոցական հոգաբարձութեանը հոգալ ուսումնարանական պէտքերը:

Աւելի անտեղի դժգոհութիւն էր յայտնում մի հարուստ ինտելիգենտ պարոն, որը կարդում է թէ ռուսերէն և թէ հայերէն լրագիրներ և որը հրապարակով լուտանքներ էր թափում հարկաբաժանների հասցէին (հայր և մայր հայհոյելով), որ նրանք տուրք են նշանակել իրան 15 րուբլի, որի համար ուզում էր պատռվել և կաշուց դուրս գալ: Մինչդեռ այդ պարոնը իր նորերս վախճանված հօր յիշատակին մի 200 րուբլիանոց «ճաղ» (ջահ) է գնել և փառաւորապէս բերել կախել է մեր Նորքաղաքայ մայր եկեղեցում, որին (ջահին) նայողը զմայլվում է ուղղակի... Ասացէք խնդրեմ, երբ ձեր միջոցները ներում են 200 ր. վճարել մի «ճաղի» համար եկեղեցուն իբր զարդարանք նուիրելու, ապա ինչու չէք ուրախութեամբ վճարում մի 15 ր. կրթական գործի աջողութեան համար: Կամ թէ երբ 15 ր. համար անտեղի դժգոհութիւն էք յայտնում, այն էլ ուսումնական գործի վերաբերմամբ, այլևս ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ ձեր 200 րուբլիանոց ջահը, որ կախել էք եկեղեցում ի յիշատակ ձեր հարուստ հօր, ի տես հանդիսականների...

Բաւական է, պարոններ, խիղճ ունեցէք: Ձեր դժգոհութիւնը հասարակական իւրաքանչիւր գործի դիմաց, դէպի յանձնաժողովի հասցէն՝ անտեղի է: Եթէ դուք ինքներդ լինէիք նրա տեղ, նոյնպէս կը վարվէիք, քանի որ այդ փողը պէտք է տար մեր ժողովուրդը և ուրիշ ոչ ոք: Մոռանում էի ասել, ուրիշ բան էր, եթէ մարտի 22-ի ընդհանուր ժողովին դուք լինէիք, բոլորովին հարուստ դասակարգ դայիք ժողով և մեծամասնութիւն կազմելով՝ վճռէիք հարկերը բաժանել հողի վրա ի միասին չքաւորների, ըստ որում նրանք իբրև աղքատ ընտանիքներ, օրվայ հացի կարօտ լինելով չէին կարող վճարել տուրքերը, ուստի պօլիցիան կամ ստիպված կը լինէր նրանց պղինձ-պղնձկալը, չուլ ու փալասը և վերջին իրեղէնները ծախել կամ թէ առաջարկել քաղաքին բաշխելու մնացած ապառիկները: Ի՞նչ դուրս կը գար դրանից,—այն, որ դուք ճիւաղային քրքիջով կուրախանայիք այդ դէպքերից, իսկ ուսումնարանը կը տառապէր անշուշտ դրամական միջոցների տեսակէտից: Բայց ինչ ուզում է թող լինի. հասարակութիւնը կամ բուն ժողովուրդը յանձնաժողովի կողմն է, որի որոշումը՝ որոշում է և ձեր դժգոհութիւնը անտեղի:

Գ. Սինանեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երևան, մայիսի 7-ին

Երևանի մանր-առևտրական և արհեստաւորական ընկ. ընդհանուր ժողովը անցեալ մարտի 11-ին, իր 1906 թ. օգուտներից յատկացրեց յօգուտ պանդխտացիների, առանց ազգի խտրութեան, 150 րուբլի:

Ուղարկելով խմբագրութեանդ Երևանի փոխատու վարկի ընկերութեան № 2780 փոխադրական տոմսակով յիշեալ 150 րուբլին, վարչութիւնս խնդրում է հասցնել այդ գումարը ըստ պատկանելոյն և ստանալու մասին հրատարակել Ձեր լրագրում:

Նախագահ վարչութեան՝
Ս. Տէր-Մարտիրոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աղէտեալների օգտին ստացանք. 1) Բագուից—Արտաշէս Տէր-Ղազարեանի միջոցով ժողոված 10 ր., 2) Սուխումից—Եղիա Բէօսեանի միջոցով 53 ր. 75 կ., որը նա ժողովել է Համբարձում Մուսայեանի և Արամ Մելիքեանի օգնութեամբ տեղական հայ հասարակութիւնից:

—

Թիֆլիսի գեն.-նահանգապետը մերժել է Թիֆլիսի մանրավաճառների պրօֆեսիօնալ միութեան խնդիրքը, որով խնդրել էին թոյլ տալ ընդհանուր ժողով գումարել վարչութեան անդամներ և այլ պաշտօնեաներ ընտրելու նպատակով:

—

Թիֆլիս-Վլադիկավկազ էլէքտրական ճանապարհ կառուցանելու թոյլտուութիւնը ինժեներ Կուչինսկին արդէն ստացել է: Աշխատանքները տևելու են մէկ տարու չափ: Ծախքը, որ հաւասար է մօտ 15 միլիօն րուբլու, մտադրվում է ձեռք բերել ակցիաներ բաց թողնելով:

—

Կիրակի, մայիսի 13-ին, առաւօտեան ժամը 10-ին քաղաքային խորհրդի դահլիճում կը կայանայ Հայոց Բարեգործական ընկերութեան անդամների տարեկան ընդհանուր ժողովը:

—

Մայիսի 8-ին, երեկոյեան մօտ 7 ժամին, ոչխարների հօտը դէպի արօտատեղի քշող հովիւների վրա, Վօրօնցօվսկի փողոցում, յարձակվել են անյայտ չարագործներ ոչխարներ գողանալու նպատակով, որի պատճառով նրանց մէջ վէճ է ծագել և որի ժամանակ չարագործներից մէկը կրակել է: Կրակողին ձերբակալել են և տարել կօմենդանտական վարչութիւնը:

—

Մայիսի 25-ին Զուբալովի ժողովրդական տան մէջ ժողովրդական համալսարանների Թիֆլիսի ընկերութիւնը երաժշտական գործիչների ընկերութեան աջակցութեամբ կը կայացնէ համերգ երկու ընկերութիւնների միջոցներն էլ ուժեղացնելու նպատակով:

—

Կիրակի, մայիսի 13-ին, Զուբալովի ժողովրդական տանը կը կայանայ 2 դասախօսութիւն՝ 1) Պ. Սուրգուլաձէի, վրացերէն լեզուով, «Դարվինի թէօրիան» և 2) Ալ. Ի. Խատիսեանի «Նորմալ հանգստութիւն»: Վրացերէն դասախօսութեան սկիզբն է 11 ժամին, իսկ հայերէնինը—12 ժամին:

—

Անդրկովկասի երկաթուղիների կառավարիչ ինժեներ Նէյդէբաուէրը, ի հաստատումն իր անցեալ տարվայ հրամանի, նորից հեռագրով տեղեկացրել է բոլոր երկաթուղագծերի կայարանների կառավարիչներին, որ երկաթուղիների կայարանների պլատֆորման արգելվում է դուրս ելնել մասնաւոր անձանց և կայարանում գործ չունեցող վարպետներին և բանուորներին: Պարտականութիւն է դրված բոլոր կառավարիչ անձերի վրա—ճշտութեամբ կատարել յիշեալ կարգադրութիւնը:

—

Գանձակից մեզ հաղորդում են, որ ամսիս վերջերում Պօղոս Կարա-Մուրզան տեղական մի խումբ կանանց խնդրանօք մտադիր է խմբական մի համերգ տալ: Խումբը բաղկացած կը լինի սիրողներից: Համերգից գոյացած զուտ արդիւնքի մի մասը յատկացվելու է բարեգործական նպատակի:

—

Թիֆլիսում կազմվել է «սօցիալիստ-տերրօրիստների» նոր խումբ: Յիշեալ կօմիտէտի ռազմիկ խումբը մօտ օրերս ուղարկել է իշխ. Դ. Վեզիրօվին մի նամակ, որով պահանջել է 50 րուբլի. Նամակը վերջանում է այսպէս. «չը վճարելու, կամ ոստիկանութեանը դիմելու դէպքում դուք մահվան կը դատապարտվէք»:

—

Մայիսի 10-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Լաբարատօրնի փողոցում յանկարծակի վախճանվել է ժանդարմ Կօկտենկօն: Դիակը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոցը:

—

Բագուից հաղորդում են, որ մայիսի 8-ին ցերեկվայ ժամը 3-ին, դէպի Սաբունչի տանող գծի վրա, Բագու կայարանի դիմաց շոգեմեքենան երկու վագօնների հետ իր տակովն է արել 28 տարեկան զինւոր Ստեփան Պետրոսեանցին, որը իսկոյն ճխլվել—մեռել է:

—

Բագւում, մայիսի 8-ին, գիշերվայ ժամը 1-ին 8 անյայտ ատրճանակներով զինված անձինք ներս են խուժում Թիֆլիսեցի Ա. Նօվօսէլցէվի բնակարանը: Կողոպտիչներից երեքը բռնում են Նօվօսէլցէվին, իսկ երկուսը նրա կնոջը, և սկսում են նրանց հարուածել և խեղդել: Նօվօսէլցէվին աջողվում է մի կերպ դուրս պրծնել յարձակվողների ձեռքից, դուրս վազել փողոց և աղաղակ բարձրացնել, որի շնորհիւ անյայտները փախչում են, կրակելով Նօվօսէլցէվի վրա երկու անգամ: Նօվօսէլցէվը թեթև վիրաւորվում է ձեռքից, իսկ նրա կնոջ կողքը կոտրվել է, որի պատճառով նրան տեղաւորում են Սև-քաղաքի հիւանդանոցում: Ոստիկանութեանը աջողվում է ձերբակալել երկու պարսկահպատակների—Աբիլ-Ջաֆար-օղլուն և Մահմուդ-Աղըղ-օղլուն, որոնցից առաջինին ճանաչել է Նօվօսէլցէվը, իսկ միւսը միայն կասկածվում է յարձակման մէջ:

—

Բագւում, մայիսի 5-ին, բժիշկները խորհրդակցելով, արտասահման մեկնած բժիշկ Գազպէրինի տեղ Միքայէլեան հիւանդանոցի վերատեսուչ են ընտրել բժիշկ Մդիվանիին:

—

Կիրակի, մայիսի 5-ին, Բագւում, քաղաքային վարչութեան մէջ կայացել է ֆէլդշէրների, ֆէլդշէրուհիների և մանկաբարձուհիների ընդհանուր ժողովը: Ամբողջովին ընդունվել է մասնաժողովի մշակած Բագու քաղաքի բժիշկների օգնականների ընկերութեան կանօնադրութիւնը, որից յետոյ ընտրվում է 6 հոգուց բաղկացած մի մասնաժողով, որին և յանձնարարվում է տպագրել մի քանի օրինակ յիշեալ կանօնադրութիւնից և ներկայացնել նրան մօտիկ ապագայում պ. քաղաքապետին՝ ի հաստատութիւն: Հէնց այդ ժողովում իրար մէջ ժողովում են 15 րուբլի մանր ծախքերի համար: Ինչպէս հաղորդում է «Бак. Изв.» լրագիրը, յոյս կայ, որ այս ընկերութիւնը կըսկսէ գործել մօտ օրերս:

—

«Бак. Изв.» լրագիրը հետևեալ տողերն է նուիրել Բագուի քաղաքային ձայնաւորների ընտրութիւնների վերաբերութեամբ: 1907—1911 թ. թ. քառամեակի համար ձայնաւորների ընտրութիւնները կայացան մարտի 15-ին: Մինչև ձայնաւորների հաստատելը, դումայի նիստերը նոր կազմով չը կարողացան կայանալ, իսկ հին կազմը, անկասկած է, վճռելով, որ իր լիազօրութիւնները նոր քառամեակի ընտրութիւնների օրից վերջացան, մարտի 15-ից էլ չեկաւ դումայի և ոչ մի նիստին: Սակայն քաղաքի գործերը բոլորովին խառնվել են, քաղաքը ամբողջովին պարտքի մէջ է. դուման չէ լուծել մօտ 50-ի չափ կարևոր հարցեր, որոնք կապ ունեն քաղաքի եկամուտների հետ, չեն քննված և լուծված 1905 և 1906 թ. թ. եկամուտների և ծախքերի հաշիւները, իսկ քաղաքի հայրերը հանդստութեամբ վերցրին իրանց վրայից իրանց լիազօրութիւնները և վիրաւորված, հեռացան, թողնելով ամբողջ քաօսը կարգի բերել ձայնաւորների նոր կազմին: Համաձայն որոշման, երէկ, մայիսի 7-ին, պէտք է կայանար դումայի նիստը, սակայն վարչութիւնը, կարծելով, որ ձայնաւորների նոր կազմի հաստատումը տեղի կունենայ մօտ օրերս, դումայի նիստ չը կայացրեց: Նոր կազմը ունենալու է երկու-երեք հերթական նիստեր, որոնց ժամանակ, բնական է, չեն կարող քննվել բոլոր—շատ տարիների ընթացքում մէկ օրակարգից միւս օրակարգը քշվող հարցերը և նրանց մասը կը յետաձգվի մինչև աշունը: Ո՞րբ, արդեօք, վերջապէս կարելի կը լինի սպասել, որ անցեալ տարիների եկամուտները հաստատվեն: Միթէ տասը տարի անցնելուց յետոյ:

—

Ի նկատի ունենալով, որ Բագու քաղաքը գնելու է ձիաքարշը՝ էլէքտրաքարշով փոխարինելու համար, Վարշավայի «Лильваль, Рау и Левенштейнъ» գործարանների ակցիօներական ընկերութիւնը առաջարկել է քաղաքային վարչութեանը իր ծառայութիւնը—հայթայթելու վագօններ էլէքտրաքարշի համար:

—

Մայիսի 6-ին Բագւում տեղի է ունեցել Նիկօլայեվսկի տօնավաճառի բացումը: Ցերեկվայ ժամը 1-ին մաղթանք կատարելուց յետոյ առևտուրը սկսվում է: Մաղթանքին ներկայ է եղել ոստիկանապետի պաշտօնակատարը: Առանձին կենդանութիւն առևտրի մէջ չէ նկատվում: Այս տարի Նիժնի-Նօվգօրօդի վաճառականներից շատ քչերն են եկել Բագուի տօնավաճառը: Նոյնիսկ Սարատովի սարպինկաներ վաճառողներից, որոնք ամեն տարի գալիս են տօնավաճառ, այս տարի բացակայում են, որովհետև վերջին տարիներս, գալով տօնավաճառ, նրանք ահագին վնասներ են կրել: Տօնավաճառին նուագում են երկու երաժշտախումբ: Անկարգութիւնների առաջն առնելու համար, մայիսի 6-ից [illegible]

Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրը, ընդունելով Սպա քաղաքում (Բելգիա) յուլիս և օգոստոս ամիսներին բացվող ջերմախօսական ցուցահանդէսը ուշադրութեան արժանի, դիմել է Բագուի քաղաքային վարչութեան և առաջարկել է մասնաւոր անձանց ուղարկել ցուցահանդէս իրանց հանքային ջրերը՝ պարգևներ ստանալու նպատակով:

—

Բագւում կազմակերպված Բագուի հրէական համայնքի կանօնադրութիւնը պարունակում է հետևեալ կէտերը. 1) Ի մի միացնել Բագու քաղաքի և նաւթարդիւնաբերական շրջանների բոլոր հրէաներին իրաւական, կուլտուրական և կրօնական շահերի հողի վրա, ինչպէս և չունևորներին հաւասարաչափ օգնութիւն հասցնելու համար: 2) Նրա անդամների հասարակական-օրինական շահերի պաշտպանութիւն և հսկողութիւն: 3) Կրօնական պահանջների իրականացումն: 4) Կուլտուրական հարցերի բաւարարեցումն, օրինակ դըպրոցներ բանալ և պահել, գրադարաններ հիմնել և այլն: 5) Նիւթական օժանդակութիւն հայթայթել աղքատ հրէաներին, հիմնել հիւանդանոցներ և այլն: 6) Համայնքի անդամների տնտեսական դրութիւնը բարւոքել փոխատուութիւններ տալով և այլն: 7) Համայնքը հանդիսանում է իբրև իրաւաբանական անձն և իրաւունք ունի ձեռք բերել կալուածքներ և այլն:

—

Բագուի զօրաբանակը լրացնելու համար, Թիֆլիս մեկնած գրուզինսկի գնդի փոխարէն, Բագու է գնացել Դերբենտեան 154-րդ հետևակ գունդը:

—

Ձիաքարշի ծառայողների գործադուլը Բագւում:—Մայիսի 6-ին առաւօտվանից ձիաքարշի երթևեկութիւնը բոլոր գծերում դադարեց: Ծառայողները յայտարարեցին գործադուլ: Ապրիլի 25-ին ձիաքարշի տէրերի ընդհանուր ժողովում քննվում էին վաղուց արդէն ներկայացրված ծառայողների պահանջները: Վըճռված էր բաւարարութիւն տալ հետևեալ պահանջներին. աւելացնել 2-ական րուբլիով բնակարանների վարձը, որը սկզբում ստացվող 3 րուբլու հետ կանէ 5 ր. ամսական, (ծառայողները պահանջում էին 8 ր), բանալ ծառայողների համար ճաշարան և թէյատուն, ճանապարհների վրա աշխատող վարպետներին տալ օգնականներ և 3 տարի ծառայած բանւորների օրավարձը աւելացնել 10 կօպ.: Մայիսի 6-ին ծառայողները համաձայնեցին ընդունել բոլոր արած զիջողութիւնները մէկ պայմանով, որ 10 կօպէկը աւելացվի բոլոր բանւորներին: Ընկերութեան վերատեսուչ Գ. Ռինանօվը յայտնելով, որ նա լիազօրված չէ կատարել այդ պահանջը, խնդրում է ծառայողներին սպասել ակցիօներների հետևեալ ընդհանուր ժողովին, համաձայնելով միևնոյն ժամանակ աւելացնել բոլոր ծառայողների օրավարձը միայն 7 և կէս կօպէկով: Ծառայողները չը համաձայնեցին դրան, և այդպիսով գործադուլ յայտարարվեց 2 և կէս կօպէկի պատճառով: Այժմ ծառայողները պնդում են, որ բաւարարութիւն տրվի իրանց բոլոր պահանջներին, որ նրանք ներկայացրել են շատ առաջ և որոնք յայտնի են բագուեցիներին: Միջադէպի լուծումը մօտիկ ապագայում չէ նախատեսնվում: («Б. И.»)

—

Մայիսի 8-ին, ցերեկվայ ժամը 2-ին, Կրասնօվօդսկի փողոցում, Բագուի ժողովարանի շինութեան մօտ, մէկ անյայտ անձնաւորութիւն երեք անգամ կրակում է «Միլօվ և Թայիրօվ» ընկերութեան գրասենեակի կառավարիչ Մ. Տէր-Անդրէասեանի վրա, սակայն արձակված գնդակներից ոչ մէկը նպատակին չէ հասնում. կրակողը փախչում է:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մայիսի 7-ին, երեկոյեան ժամը 7-ին, Օլգինսկի փողոցում, տուն № 3, յանկարծակի վախճանվել է Սուքիաս Առաքելեանը: Նրա դիակը ուղարկվել է Միքայէլեան հիւանդանոցը:

—

Մայիսի 7-ին, ցերեկվայ ժամը 12-ին Նիկօլայեվսկի կըզու վրա փոքրիկ տղայ Ռուբէն Տալախանեանցը, ցանկանալով նստել էլէքտրաքարշի վագօնը, վայր է ընկել և ընկել է ետևից միացած 2-րդ վագօնի տակ, որը կոտրել է նրա ոտքը: Վիրաւորվածին տարել են Միքայէլեան հիւանդանոցը,

—

Մայիսի 7-ին, երեկոյեան ժամը 5-ին գրպանահատ Բերդաշվիլին հանում է էլէքտրաքարշի վագօնում նստած ֆիլդֆէբել Գէօրգի Լաշկօվի քսակը, որի մէջ լինում է 90 րուբլի: Բերդաշվիլին ձերբակալված է:

—

Մայիսի 8-ի երեկոյեան ժամը 6 և կէսին Դիդուբէի ապրանքային կայարանի լուղորդ Իվան Սամօտուրօվը ոստիկանատուն է տանում մի պինջակ, շալիկ և յարդէ գլխարկ և յայտնում է, որ մի քանի րօպէ առաջ, ապրանքային կայարանից ոչ հեռու, Քուռ ափին մօտենում է մի ինչ որ հասակաւոր պարոն, հանվում է և նետվում ջուրը և այլևս չի երևում ջրի մակերևոյթին:

—

Մայիսի 8-ին, երեկոյեան ժամը 7-ին, Բաթումսկի փողոցում (10-րդ քաղաքամաս), Կազակովի տան բակում, պաշտօնաթող գնդապետ Միրզա-Կուլի-բէկ Աղազարովի որդի Մէջիդը «Մօնտեկրիստօ» սիստեմի հրացանից անզգուշութեամբ կրակում է, որով վիրաւորում է 1-ին ոստիկանատան թաղային վերակացու Առամէվի որդի Դաւիդին սրտից, որը մի քանի րօպէ յետոյ մեռնում է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

(Ճանապարհորդական տպաւորութիւններ)

I

Բեռլին

Ինչպէս եւրոպական ամեն մի քաղաք, այսպէս և Բեռլին ոտք դնելուն պէս աչքի է ընկնում ներկայ քաղաքների մօդեռնութիւն տուող երկաթէ ճարտարապետական շէնքերի գոյութիւնը: Նախկին դարերում թէև երկաթը գործի մէջ էր դրված, սակայն նա այդ բարդ ստեղծագործութիւնների նիւթ ծառայելուն չէր հասել, ինչպէս ներկայումս, որի համար միայն իսկապէս հպարտանալ կարելի է «երկաթէ դար» անուանելով: Անցեալում—մօտիկ թէ հեռու—ճարտարապետութեան գըլխաւոր նիւթը քար կամ նման իրերն էին [illegible] մում և զուգէ ապագայումն անգամ անկարելի լինի դրանցից գեղարուեստականութեամբ այն կողմն անցնել. օրինակ, շատերը կարծում են, որ դժուար թէ այսուհետև քարից և կամ նման նիւթից այնպիսի վեհութիւններ պատրաստվեն ինչպէս Հռօմի եկեղեցին և կամ Քէօլնի Դօմը: Այդ նիւթերի մշակումը, եթէ իրանց գագաթնակէտին չեն հասել, գոնէ հանգիստ սրտով կարելի է ընդունել, որ դըրանց ծաղկումը արդէն մօտենում է դրանցից կարելիութեան վերջին խօսքին. այնինչ երկաթի վերաբերմամբ դրութիւնը այդպէս չէ. իսկապէս նա նոր է սկսում ասպարէզ գալ իբրև գեղարուեստի նիւթ և դեռ իր զարգացման սկիզբների մէջ է և յօյսեր է տալիս նորանոր կարելիութիւնների. դեռ անորոշ ապագային է պատկանում երկաթէ շինուածքների վերջին խօսքը:

Երկաթէ ճարտարապետական շէնքերի տպաւորութիւնը ունի իր առանձին բոյրը, մի այնպիսի ինքնուրոյնութիւն, որը յատուկ է միմիայն իրան. մտէք Բեռլինի կայարանները, դիտէք նրա կամուրջները, մարկտհալլէները*) և այդ բոլորը ցոյց են տալիս, որ նրանք ճարտարապետութեան մէջ մի առանձին տեղ ունենն, առանձին տպաւորութիւններ, որոնք յատուկ չեն քարից և կամ նման նիւթերից շինված գեղարուեստական շէնքերին: Քարաշէնքերը թողնում են մարդու վրա ծանր, լուրջ, խորհրդաւոր տպաւորութիւն, այնինչ երկաթէ շինուածքները թեթև, հանգստացնող, ինչպէս ասում են, սիրտը բացող տպաւորութիւն. երկուսն էլ օրիգինալ, երկուսն էլ հաճելի: Խօսքերով բացատրել այդ երկուսի մէջ եղող նուրբ տարբերութիւնները, տպաւորութիւնների իրարից խտրող նիւանսները, գոնէ ես իմ ուժերից վեր եմ ընդունում. պէտք է տեսնել և զգալ այդ նրբութիւնները:

Երկաթէ շէնքերին առանձին տպաւորութիւն է տալիս այն հանգամանքը, որ այդ բարձր ու մեծ շէնքերը, հսկայական կորացումները և դրանց զանազան ուղղութիւնների միացումները կարծես կատարվում են տարօրինակ թեթևօրէն, կարծես իրանց մէջ ծանրութիւն ասած բանը չունենն. այն առանձին խորը ազդող և ծանրութեան տպաւորութիւնը, որը յատուկ է քարէ շէնքերին, բացակայում է երկաթէ շէնքերի մէջ: Դրան օրինակ կարող է ծառայել այն կայարանը, որ մենք եղանք, և Բեռլինի կենտրոնական մարկտհալլէն. այդ հսկայական, բարձր, մեծ կամարներից և դըրանց զանազան միացումներից կազմված շէնքերը վեհ ու բարձր, հոգին ընդլայնող տպաւորութիւն թողնելուց զատ և այն տպաւորութիւնն են թողնում, որ կարծես այդ հսկայ մեծութիւնները մի չնչինութեան վրա են հիմնաւորվում: Քարէ շէնքերի ցօկոլը, ներքին մասերը պէտք է այնպէս շինված լինեն, որ ցոյց տան, թէ իրանց վրա է վերցնում մի հսկայական ծանրութիւն, այն ինչ երկաթէ շէնքերը այդպիսի տպաւորութիւն թողող հիմքերի կարիքը չունենն. նրանք երկրի վրա ամրանում են շատ թեթևօրէն, առանց մեծ ծանրութեան տպաւորութիւն թողնող հիմքերի. նրանք, կարծես, օդի մէջ թառ եկած թռչուններ են, որոնց թևերը մեղմիւ շոյվում են երկրի երեսին. և այս հանգամանքը երկաթէ շէնքերին տալիս է մի ինքնուրոյն տպաւորութիւն, յատուկ միմիայն իրան: Այդ շէնքերի դիտումից յետոյ ես այն եզրակացութեանը եկայ, որ ճիշտ է մի քանի գեղարուեստագէտների այն կարծիքը, որ երկաթէ շէնքերը իրանց ուրոյն ոգին և գեղեցկութիւնն ունենն և պէտք է ձգտել նրա աւելի ու աւելի զարգացմանը, քանի որ նա զարգացման դեռ մեծ շանսեր ունի:

Գուրգէն Եդիլեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

9 մայիսի

ՕԴԵՍՍԱ, 8 մայիսի: Եկեղեցու մօտ, ուր գտնվում էր ռումբով սպանված Սարակեվիչի դիակը, երկու անգամ կրակեցին ամբոխի վրա, որը հետևում էր ռումբից սպանված պրիստաւ Պանասիւկի դագաղին: Սկսվեց իրարանցում: Կանայք ուշաթափվեցին կասկածելով, որ կրակողները թաքնվել են «Անգլիա» հիւրանոցում. ամբոխի միջից երիտասարդների մի խումբ կրակ բացեց հիւրանոցի վրա: Ոչ ոք չը վիրաւորվեց: Մօտակայ փողոցներում խանութները և կրպակները սկսեցին փակել: Ամբողջ թաղամասը շրջապատվեց զօրքերով: Տեղի են ունենում խուզարկութիւններ և ձերբակալութիւններ:

ՉԵՐՆԻԳՕՎ, 8 մայիսի: Քաղաքից ոչ հեռու, տօնավաճառ գնացող երեք հրէաների վրա յարձակվել են մի քանի աւազակներ և սպանել են նրանցից երկուսին, իսկ երրորդին ծանր վիրաւորել:

ԼԱԳՕՐ, 8 մայիսի: «Հնդկաստան» լրագրի ձերբակալված խմբագիրը յանձնված է դատարանին՝ կառավարութեան դէմ անբաւականութիւն յայտնելու և տեղական զօրքին ապստամբութեան գրգռելու համար: Նա երաշխաւորութեամբ չէ ազատվել:

ՏԻԱՆՑԶԻՆ, 8 մայիսի: Մաքսատունը գրաւեց 8000 հրացան և 300,000 փամփուշտ, որոնց այստեղի ֆիրմաներից մէկը ուղարկում էր յեղափոխականներին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մայիսի: Հոկտեմբերականների համակայսերական համագումարի երրորդ նիստին ընդունվեց երկու որոշում՝ մէկը այն է, որ մտաւ դաշնակցութեան ծրագրի մէջ թէ պէտք է կռիւ մղել արբեցողութեան, իբրև ժողովրդական չարիքի դէմ, երկրորդ՝ յանձնարարել դումայական ֆրակցիային պահել Դուման, որովհետև ծայրայեղ ձախակողմեանները սկսում են հակասահմանադրական տակտիկա գործածել, որպիսին աւելի խիստ կերպով արտայայտվեց մայիսի 7-ի նիստում, երբ հոկտեմբերականները բացակայում էին:

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ, 8 մայիսի: Սէյմի կին պատգամաւորները, ըստ ֆրակցիաների, բաժանվում են այսպէս. 9 սօցիալ-դեմօկրատներ, 6 հին ֆինլանդուհիներ, 2 շվեդօմաններ, 1-ական հոգի ագրարային սօցիալիստական և գիւղացիական դաշնակցութիւնից:

ՓԱՐԻԶ, 8 մայիսի: Ի պատիւ անգլիական համալսարանների տեղս եկած ներկայացուցիչների կայացաւ շքեղ նախաճաշ: Պիշօնը ճառ արտասանեց, որով մատնանշեց, որ ներկայ հանդէսը ներկայանում է նոր ապացոյց Ֆրանսիայի և Անգլիայի սերտ միացման՝ խաղաղութեան և քաղաքակրթութեան գործում, և առաջարկեց անգլիական արքայական զոյգի և Անգլիայի մեծութեան կենացը: Անգլիական դեսպանը Էդուարդ թագաւորի անունից շնորհակալութիւն յայտնեց և խմեց Նախագահ Ֆալիէրի և Ֆրանսիայի ծաղկման կենացը:

ՀԱՄԲՈՒՐԳ, 8 մայիսի: Ալտօնում կայացաւ Համբուրգի և Ալտօնի մօտ 800 նաւատէրների ժողով: Միաձայն ընդունվեց յայտարարել անմիջապէս գործադուլ, որը սպառնում է ընդգրկել բոլոր շրջանները, բացի ձկնորսական նաւերի ծառայողներից:

10 մայիսի

ԼՈՆԴՕՆ, 9 մայիսի: «Դէյլի-Նիւսը» ռուս սօցիալ-դեմօկրատների համագումարի առթիւ ասում է. «Թէև Լօնդօնում գտնվող ռուսները մտադրվեցին իրանց նուիրել սոսկ լուրջ գործունեայ խորհրդակցութեան, բայց և այնպէս նրանք չը կարողացան խուսափել կօնֆերենցիայի շինութեան մօտիկ տեղերի խուլիգան տարրերի ուշադրութիւնից: Ժամանակ է արդէն բողոքել այն զզուելի տեսարանների դէմ, որոնք տեղի են ունենում ռուս սօցիալ-դեմօկրատների ժողովատեղի շրջանում համարեա ամեն գիշեր բաւականաչափ ոստիկանների ներկայութեամբ: Ըստ երևոյթին այդ հարցը կը յարուցվի ապագայ շաբաթում պարլամենտում պրեմիէրի միջոցով:

ԲԱՐՑԵԼՕՆԱ: Մինչև վերջին թիւը այրվեց այն կրկէսը, ուր կռւեցնում էին ցուլերին:

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 9 մայիսի: Պարլամենտական մասնաժողովում, երկաթուղային օրինագիծը քննելու ժամանակ, առևտրի մինիստրը դըրականապէս յայտնեց, որ երկաթուղային ծառայողների համար ունգարական լեզու իմանալը անպայման անհրաժեշտ է: Այդ մասին մասնաժողովը յայտնեց խորվաթների լիազօր Տուսկանին:

Գործադուլների համար պատիժ նշանակելու վերաբերութեամբ ստատս-սեկրետար Զէրնին բացատրեց, որ անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ երկրի կենսական շահերը. օրինագիծը ապահովում է երկաթուղային ծառայողների քաղաքական իրաւունքները, սակայն տերրօրիստական երևոյթները անպատճառ պէտք է ճնշվեն, որտեղից էլ որ նրանք բղխելիս լինեն:

Հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան համակայսերական համագումարի 4-րդ նիստում, որ կայացաւ Գուչկօվի նախագահութեամբ, ի նկատի առնելով, որ դաշնակցութեան կանօնադրութեան նախագիծը չէ ուղարկված նախօրօք տեղական բաժիններին, նրա քննութիւնը յետաձգվեց մինչև յետագայ համագումարը և ընդունվեց միայն այն գլուխները, որոնցով որոշվում է կենտրոնական կօմիտէտի ընտրութեան կարգը:

Հեռագիրներ են ուղարկված, որոնցով յայտնում են, որ մաղթանքներ են կատարվել Թագաւոր Կայսրի ազատման առիթով, հետևեալ տեղերից. Պեատիգօրսկից, Նիժնիից, Կրասնօեարսկից, Խարկովից, Սարատովից, Կիևից, Մինսկից, Տօմսկից, Կերչից և այլն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մայիսի: Երէկ մինիստրների խորհրդի նիստում քննվեց և ընդունվեց, Դումա մտցնելու համար, արդարադատութեան մինիստրի օրինագիծը—աւելացնելու դատաստանական վարչութեան պաշտօնեաների ռոճիկները: Այդ նպատակով ամեն տարի բաց է թողնվելու 4,969,975 րուբլի:

Ընդունվեցին նաև ծովային մինիստրի առաջարկը՝ գնելու Անգլիայում վառելանիւթ բալտիական նաւահանգիստների և գործարանների համար, և ֆինանսների մինիստրի առաջարկութիւնը՝ հաստատելու Պարսկաստանում բացված զեղջափոխանակ բանկի կանօնադրութիւնը:

Պետերբուրգի դատաստանական պալատի երդուեալ-հաւատարմատարների ընդհանուր ժողովը խորհրդի նախագահ ընտրեց Ստասօվին, նախագահի օգնական՝ Բազունօվին:

ԺԻՏՕՄԻՐ, 9 մայիսի: Մօսկվայի փողոցում, գիշերով, Դուվիտ Օկսի, Մէնդէլ Գէրշէրի և Գէրշ Րաբինօվիչի բնակարանում խուզարկութիւն կատարելու ժամանակ, վերջիններս ցոյց տուին զինված դիմադրութիւն: Հրացանաձգութեան ժամանակ վիրաւորվեցին չորս քաղաքապահներ, մէկը ծանր, և երկու ժանդարմական ունտեր-օֆիցէրներ: Գէրշէրը սպանվեց, Րաբինօվիչը վիրաւորվեց և ձերբակալվեց, իսկ Օկսը փախաւ: Բնակարանում գտնվեցին չորս պատրոյգով բռնկվող ռումբեր, մի քանի ատրճանակներ և անլեգալ գրուածքներ: Քննութիւն է կատարվում:

ԼԻԲԱՎԱ, 9 մայիսի: Երէկ երեկոյեան անյայտ չարագործները սպանեցին բանտի կառավարչի օգնականին:

---

*) Մարկտհալլէ (Markthalle) է կոչվում մի շէնք, [illegible]

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզատեղ. հ.:
Կ. Մ. ՁԻԿ-ՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Ձ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱՒՍԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մաշկի, վեներակ. վիրաբուժութիւն:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.:
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան:

Վճարը 30 կ.: չքաւորները ձրի: Համաճարակի (կոն[illegible]) [illegible]

Հիւանդանոցի [illegible]

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ
(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից դէպի Բագու		
Արագ	6 ժամ 58 ր.	առաւօտ.
Մարդատար	9 » 3 »	»
Փօստատար	8 » 34	երեկոյեան
Թիֆլիսից դէպի Բաթում		
Փօստատար	1 ժամ 21 ր.	ցերեկվայ
Արագ	11 » 58 »	գիշերվայ
Մարդատար	1 » 3 »	»
Թիֆլիսից դէպի Բօրժոմ		
Մարդատար	9 ժամ 48 ր.	առաւօտ.
»	3 » 8 »	ցերեկվայ
Թիֆլիսից դէպի Երևան		
Մարդ.-ապրանք.	1 ժամ 43 ր.	ցերեկվայ
Փօստատար	1 » 8 »	գիշերվայ

„ՓԱՐՈՍ“
ՆԻԿ. ՄԱՏԻՆԵԱՆԻ
Լրագրա-գրախանութում
(Թիֆլիս, Երևանեան հրապարակ)
ՆՈՐ ԳՐՔԵՐ
«ՑԱՌԱՋ»-ի գրադարանի

1) Նեկրասօվ. Ինչպիսի կարգեր են հարկաւոր ժողովրդին և ինչպէս նրանց հասնել, 94 եր. 10 կօպ.
2) Արամայիս. Վնասակարը, 32 եր. 4 կօպ.
3) Չերնօվ. Դասակարգային կռւի թէօրիայի շուրջը, 64 եր. 10 կօպ.
4) Խորամանկ կարգեր, 48 եր. 10 կօպ.

—

Բեն. Գրիգորեան. «Ազատութեան խանդ», բանաստեղծութիւններ, 64 եր. 20 կօպ.
Սկօրեկցենա. Ժողովների և միութիւնների ազատութիւնը, Թարգմ. Կ. Ապրիլեան, 48 եր. 10 կօպ.
Ն. Ա. Ազբելօվ. Կանանց հարցը Ճապօնիայում, (պատկերազարդ) Թարգմ. օր. Նունէ Թայիրեանի, 96 եր. 25 կօպ.
Բ. Իշխանեան. Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլօմատիան, 135 եր. 40 կօպ.
М. Петросянъ. «Изъ за куска хлѣба» 10 կօպ.
Պօտեխին. Մեղուաբուծութեան ձեռնարկ, 108 պատկեր, 168 երես, Թարգմ. Մելիք Վարդումեանի 75 կօպ.
Ար. Արամեան. Աշխարհի ամենագեղեցիկ գիրքը, 240 եր. 60 կօպ.
Ջանիկ. Արդեօք թագաւորում է սէր և խաղաղութիւն, 30 եր. 5 կօպ.
Լեւոն Մանուէլեան. Բանաստեղծութիւններ և պօէմաներ, գիրք երկրորդ, 107 եր. 40 կ.
Կ. Կաուցկի. Դասակարգային շահերի հակասութիւնները 1789, Թարգմ. Ռ. Դաշտօյեանի, 120 եր. 20 կօպ.
Կ. Կաուցկի. Ներկայացուցչական կառավարութիւն, Թարգմ. Ռ. Խան-Ազատի, 240 եր. 40 կօպ.
Լ. Տօլստոյ. Դաստիարակութիւն և կրթութիւն, Թարգմ. Եղ. Փօղոսեանի 104 եր. 25 կօպ.
Ս. Մելիք Սողոմօնեան. Արեան ձայներ, երրորդ տպագր. 230 եր. 50 կօպ.
Պիմէնօվ. Մշտական զօրք և միլիցիա, Թարգմ. Ցար. Եսայեանի, 16 եր. 5 կօպ.
В. Черкезовъ. Наконецъ то сознались! Отвѣтъ К. Каутскому, 25 стр. 10 կօպ.
А. Агаронянъ. Повѣсти и разсказы, перев. А. Кусикова 50 стр. 35 կօպ.

«ՑԱՌԱՋ»-ի գրադարանի—մինչև այժմ լոյս տեսած 38 գրքերը—4 ր. 28 կ. արժողութեամբ ուղարկվում է ցանկացողներին առանց ճանապարհածախսի: Պատուէրները առանց կանխավճարի ՉԵՆ ընդունվում:

«Հրատ. Ընկ. Ստ. Լիսիցեան և Ընկ.» բոլոր հրատարակութիւնների պահեստը գտնվում է մեզ մօտ:

Ծախվում են տեղական և մայրաքաղաքների լրագիրներ, հայ հեղինակների գրուածներ, հայ և ռուս նորագոյն հրատարակութիւններ և դպրոցական դասագրքեր:

Ընդունվում են հրատարակութիւններ կօմիսիայով և պահեստի համար, մատչելի պայմաններով,

Դիմել՝ Книжный кіоскъ «ФАРОСЪ» Ник. Матиняна, Эрив. площадь, Тифлисъ.
(կ. ե. ու.)

Զուտ արդիւնքը հայ սովեալների օգտին
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Վ. ՆԵՄԻՐՕՎԻՉ-ԴԱՆՉԵՆԿՕՅԻ
„Հայուհի Գայիանէ“
Դիմել Թարգմանչին՝ Москва армянскому Архид. Арсену, կամ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրավաճառանոցին:
Հաշիւը հրապարակով
2—4

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Իմ շուտ գործող մեքենաների
մասին



Ամեն մի աշխատող կին կամ տղամարդ 12 տարեկան հասակից կարող է օրական 1 ր. 50 կ. և աւելի արդիւնք ունենալ ինձանից գնված նորութեան շուտ գործող մեքենաների միջոցով: Նախնական գիտելիքներ պէտք չեն: Մեքենաներն այստեղ և եթ կարելի է տեսնել: Թելը ես եմ վաճառում և պատրաստ գործը, վարձատրելով կանխիկ փողով, ընդունում եմ: Բոլոր մանրամասն տեղեկութիւնները տալիս եմ ձրիաբար և սիրով իմ գրասենեակումս կամ փոստով: Կովկասի միակ ներկայացուցիչը լինում է Թիֆլիսում: Դիմել՝ Тифлисъ, контора «скоровязальныхъ машинъ», Троицкая ул. 7, по сосѣдству съ глав. почтово-телеграфной конторою.

Զգուշացէք կեղծ մեքենաներից, որոնք զանազան անուններով առաջարկվում են:
(ե. չ. ու. կ.) 5—25

ԱՄԱՌԱՆՈՑ
Ղարաքիլիսում ամեն յարմարութիւններով, 5 սենեակ, Ջրանցքով, [illegible] 400 րուբլի [illegible] Դիմել [illegible] Մելիք-Կարապետեանին, Ղարաքիլիսա.
(ե. ս.) 6—8

„ՎԻՍԼԱ“
Վարշավեան կալոշատանոցում
(Թիֆլիս, Գօլովինսկի պրօսպ. № 10, Կրուժոկի տակը)
ԱՌԵՒՏՈՒՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ
ՊԱՏՃԱՌՈՎ
շտապով ծախվում է
ՄԱԳԱԶԻՆԸ
նոր ստացված հրաշալի կահկարասիքով (կամ առանց կահկարասիքի):
ՆՈՅՆ ՏԵՂԸ
ծախվում են կալոշի գործարանի գործիքներ, նաև հրաշալի, նիկելով ծածկված, և հասարակ տասնորդական կշեռքներ
(ու. կ. ե.) 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Մայիսի 1-ից վերսկսում է հիւանդների ընդունելութիւնը Պեատիգօրսկում (հանքային Ջրերը):
Հասցէն Д-ръ В. Арцруни Пеатигорскъ. Верхн. буль-варъ, д. кн. Гирей.
(ե. ու. կ.) 4—100

„Գուտտենբերգ“
Գրավաճառանոցում վաճառվում է
ՊՕՏԵԽԻՆԻ
ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ
108 պատկերով, Թարգմ. Մ. Վարդումեան
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Մեղուի բնական պատմութիւնը և նրա կեանքը. Մեղուանոցի կազմակերպութիւնը. [illegible] Մեղուների հիւանդութիւնները և թշնամիները. Փեթակների կազմութիւնը, մեղուապահական իրեր և գործիքներ. [illegible] Մեղուապահական արդիւնքների գործածութիւնը. Գինն է պօստի ծախքով 1 րուբլի:
Դիմել՝ Тифлисъ, Книж. магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустянцу. 2—5

Вышелъ № 15 Вѣстника
Народной Свободы
(ЕЖЕНЕДѢЛЬНИКЪ К.-Д. ПАРТІИ)
СОДЕРЖАНІЕ: 1. Парламентская недѣля. В. Д. Набокова. 2) Классовая непримиримость въ теоріи и на практикѣ. Л. И. Шифа. 3) Строгіе критики думы. М. М. Могилянскаго. 4) Ц. А. Абрамовичъ (Некрологъ) М. 5) Библіографія. 6) Парламентская фракція партіи народной свободы. Н. I. 7) Дѣятельность комиссій при парламентской фракціи. 8) С-Петербургская группа. 9) Провинціальный отдѣлъ. 10) Изъ жизни другихъ партій. 11) Объявленія.
Продолжается подписка на 1907 г.
(II-й годъ изданія).
Подписная цѣна съ доставкой и пересылкой на годъ—3 руб.; на 6 мѣсяцевъ 1 руб. 80 коп.; за границу—вдвое.
Отдѣльные №№ по 10 коп.
На стан. ж. д. по 12 коп.
Адресъ редакціи и конторы: СПБ., Кирочная, 30. Отдѣленіе конторы: въ Москвѣ при книгоиздательствѣ «Народное право» П.Б. Чернышевскій 9, кв. 26.
1—1

Թարգմանել եմ
Բարեանսկու «КАРЬЕРА НАБЛОЦКАГО».
1—1 Տէր. Ն. Աթայեան

ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔՈՒՄ
ծախվում է
մի տուն 425 սաժէն ընդարձակ հողի վրա շինված [illegible] Дիմել՝ Герюсы Газару Малинцяну.
Մաշադի Իբրահիմ Միրզա Սամեդով
3—3

Լոյս տեսաւ
ԷԴՈՒԱՐԴ ԲԷՐՏՐԱՆ
ՄԵՂՈՒՆԵՐԻ
ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ
Թարգմ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
76 նկարով և փեթակի երեք գլխաւոր տեսակների գծագրական քարտերով:
ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ
Վաճառվում է Կովկասեան Շերամապահական կայարանում.
ա. օ. 6—10

Մի երիտասարդ [illegible] Варцисбубенская ул. № 3. Ованесу Ованесову.
2—2

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ.

Электропечатня Типографскаго Т-ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская № 5. Телефонъ № 852